

Հայաստանի Հանրապետության տնտեսական
մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
(ՀՀ ՏՄՊՊՀ)

Հ
Ա
Շ
Վ
Ե
Տ
Վ
Վ
ՈՒ
Թ
Յ
ՈՒ
Ն

«Հայաստան. Ապրանքային
շրջանառության բնագավառում
մրցակցային խնդիրները»

Ծրագրի անվանումը՝	Հայաստան. Բաշխման համակարգում մրցակցային խնդիրները
Ծրագրի համարը՝	103430 - 011
Երկիրը՝	Հայաստանի Հանրապետություն
Կազմակերպությունը՝	Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
Հասցե՝	ՀՀ, Երևան, Մ. Սկրտչյան 5բ
Հեռախոս՝	(+37410) 545 679
Ֆաքս՝	(+37410) 543 985
Էլ. փոստ՝	ir@competition.am
Ինտերնետային կայք՝	http://www.competition.am

Աշխատանքային խումբ

Հրայր Արամյան
Կարինե Փոլադյան
Արմինե Հակոբյան
Գոհար Գրիգորյան
Խաչիկ Կարապետյան

Ազգային փորձագետներ

Պետրոս Դադայան
Արգար Եղոյան

Փոխկապակցված անձինք

Դավիթ Հովհաննիսյան
Դիանա Սինապյան
Դավիթ Գասպարյան
Արթուր Գասպարյան
Ռոբերտ Հովհաննիսյան
Աննա Վարդապետյան

Կարինե Անտոնյան
Կարեն Չիլինգարյան
Զարուհի Թումանյան

Սկիզբը՝

Մայիս, 2007

Ավարտը՝

Դեկտեմբեր, 2007

Հաշվետվության օրը՝

31 Դեկտեմբերի, 2007

Ժամանակահատվածը՝

Մայիս, 2007 - Դեկտեմբեր, 2007

Բ ո Վ Ա Ն Պ Ա Կ Ո Ւ Յ Ո Ւ Ն Ր

Երախտիքի խոսք

1. Համառոտ նկարագրություն.....	1
1.1. Ծրագրի նպատակները.....	2
2. Բացառիկ բաշխման համակարգ - սահմանումները, օրենսդրություն, սովորուքային իրավունք.....	4
2.1 Բաշխման համակարգի և «Բացառիկ բաշխման համակարգի» ոլորտներում կիրառվող տերմինների նկարագրությունը.....	4
2.2 Ապրանքային շրջանառության (բաշխման) ոլորտը կարգավորող ԵՄ և միջազգայնորեն ընդունելի այլ նորմատիվ ակտերը.....	5
2.3 Բաշխման համակարգին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը.....	7
2.4 Ապրանքային շրջանառության (բաշխման) ոլորտի վերաբերյալ սովորուքային իրավունքի նորմերը.....	9
3. Ապրանքների բաշխման համակարգում շուկայական իշխանություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրություն.....	15
3.1. Նախադրյալները	15
3.2. Մեթոդաբանությունը	15
3.3. Հետազոտության արդյունքները	18
3.4. Եզրակացություններ	24
4. Խանութների «ճնշումը» մատակարարների նկատմամբ.....	25
4.1. Նախադրյալները	25
4.2. Հարցման արդյունքները	26
4.3. Եզրակացություններ	27
5. Մրցակցության խնդիրները բաշխման համակարգում.....	29
5.1. Նախադրյալներ.....	29
5.2. Մրցակցության պաշտպանության տեսանկյունից բաշխման համակարգում դրսևորվող խնդիրները.....	29
5.3. Հայրենական ընկերությունների բաշխման համակարգերի առանձնահատկությունները.....	29
5.4. Բաշխման համակարգի ազդեցությունը մրցակցության պաշտպանության օրենքի կիրարկման վրա.....	34
5.5. Բաշխման համակարգի անկատարությանը նպաստող հանգամանքներ.....	35
5.6. Բաշխման համակարգի բարելավման ուղղությունները.....	37
5.7. Բաշխման համակարգը և սպառողների շահերը	37
6. Սպառողների իրազեկումը.....	39
6.1. Նպատակը.....	39
6.2. Արդյունքները.....	39
7. Ծրագրի արդյունքների քննարկումը.....	41
7.1.Արդյունքները.....	41
7.2.Ընդհանուր եզրակացություններ.....	41
7.3.Կարիքների բացահայտում.....	42
8. Հավելվածներ.....	44
8.1.Հավելված 1. Գրականության ցանկ.....	44
8.2.Հավելված 2. Ազենտային պայմանագիր (ռուսերեն, անգլերեն).....	45
8.3.Հավելված 3. Ենթադիստրիբյուտորական պայմանագիր (ռուսերեն).....	49
8.4.Հավելված 4. Դիստրիբյուտորական պայմանագիր (անգլերեն).....	53
8.5.Հավելված 5. Ֆրանչայզինգ (անգլերեն).....	60
8.6.Հավելված 6. Հարցաթերթիկ.....	74
8.7.Հավելված 7. Առցանց հարցման թերթիկ (արտադրողներ)	80
8.8.Հավելված 8. Առցանց հարցման թերթիկ (բացառիկ ներկայացուցիչների)	83

Երախտիքի խոսք

Ծրագրի աշխատանքային խումբը շնորհակալություն է հայտնում է IDRC-ին՝ ներկայացված ծրագրային առաջարկը հաստատելու և դրամաշնորհ տրամադրելու համար, ինչը հնարավորություն տվեց իրականացնել սույն Ծրագիրը:

Նախ, շնորհակալություն այն անձանց, որոնց էական աջակցության և օժանդակության շնորհիվ այս Ծրագիրն իրականություն դարձավ: Բավականին մեծ է Ծրագրին ուղղակի կամ անուղղակի օժանդակած անձանց ցանկը: Այն ներառում է այն պաշտոնյաներին և մասնագետներին, որոնց հետ մենք աշխատել ենք համատեղ կամ տարաձայնություններ ենք ունեցել վերջին տարիների ընթացքում: Նրանք մեզ ուժ են տվել շատ իրավիճակներում վերանայել կամ վերագնահատել տնտեսական սկզբունքների և վերջիններիս հասկացողության մեր ընկալումը, ինչը կարող է օգտակար լինել որոշումներ ընդունելու խնդրում: Այս ամենն առաջընթացի խթան է:

Երկրորդը, մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել այն անձանց, ովքեր ցանկություն հայտնեցին պատասխանել հարցաշարերին, և պետական այն մարմիններին, որոնք համագործակցեցին տեղեկատվության տրամադրման առումով:

Երրորդը, մենք արտահայտում ենք մեր երախտիքի խոսքն այն անձանց, ովքեր ստիպված էին կարդալ և մեկնաբանություններ տրամադրել ողջ ծրագրի և հաշվետվությունների նախագծման փուլում: Այս ամենի հետ մասն Ծրագրի առաջարկի նախագծմանն աջակցած անձանց հղում ենք մեր շնորհակալությունը պր.Ֆ. Մայքլ Նիկոլսոնին, Սթիվ Ռայենին, Դավիթ Հարությունյանին և Խուան Ռամոն Գազոիտտորիային:

Ի վերջո, մեր առանձնահատուկ շնորհակալությունը ենք հայտնում դոկտոր Սյուզան Ջոյեկսին, Ջուլիան Կլարկին, Մարիսե Ռաբբատին, Գեհանե Սայդին և Դիանա Լատիֆին, ովքեր ներգրավված են եղել այս Ծրագրի իրագործման աշխատանքներին, աջակցել են ծրագրային գործողություններին, ինչպես մասն Ծրագրի իրագործման ընթացքում ցուցաբերած հանդուրժողականության և փոխըմբռման համար:

1. Համառոտ նկարագրություն

Միջազգային զարգացման հետազոտական կենտրոնի (IDRC) դրամաշնորհի կողմից ֆինանսավորվող սույն Ծրագրի հիմնական խնդիրն է ուսումնասիրել ապրանքային շրջանառության ոլորտում ծագող որոշակի մրցակցային հիմնահարցեր: Հրապարակված էր, որ Ծրագիրը պետք է հիմնված լինի որոշակի գործի ուսումնասիրության և ոլորտի վերլուծության վրա և պարունակի իրավիճակների հետազոտողների, վերլուծությունների և գնահատականների արդյունքներ:



Ընդհանուր առմամբ, սույն Ծրագիրը կոչված էր աջակցել գիտելիքների պաշարի հարստացմանը՝ մարտահրավերների և հնարավորությունների առումով, որոնց առնչվում են զարգացող երկրների մրցակցության մարմինները:

Որպես առանձնահատուկ հետազոտության ուղղություններ, Ծրագիրը պետք է ընդգրկի և ուսումնասիրի ապրանքային շրջանառության ոլորտում հայտնի որոշ հնարավոր հակամրցակցային վարքագծերի դրսևորումներ կամ խնդիրներ, մասնավորապես՝

- Բացառիկ մատակարարում, երբ օտարերկրյա կամ հայրենական արտադրողը մերժում է մատակարարումը հնարավոր մրցակցող մանրածախ վաճառողներին,
- Գերիշխող դիրքի չարաշահում, մասնավորապես, քանակի հարկադրում, երբ արտադրողներն ու մեծածախ վաճառողները մանրածախ վաճառողներին ստիպում են վաճառել ապրանքի ոչ պակաս, քան սահմանված նվազագույն քանակը,
- Շուկայի իշխանության գործադրում, երբ մեծածախ վաճառողները բաշխման համակարգերի միջոցով կիրառում են իրենց մենաշնորհային կամ խմբիշխանական (օլիգոպոլ) իշխանությունն ապրանքների գնման և/կամ վաճառքի ժամանակ,
- Գերիշխող դիրքի չարաշահման բացահայտման և տուգանքի նշանակման դժվարություններ, երբ շուկայի մասնակիցների քանակի, շուկայի իրական ծավալների և այլ ցուցանիշների մասին տեղեկությունները բացակայում են, պակաս են, թափանցիկ չեն (վերաբերում են ոչ պաշտոնական սեկտորին),
- Բացառիկ գործարք, երբ մանրածախ վաճառողին չի թույլատրվում վերցնել մրցակից արտադրողների կամ մեծածախ վաճառողների ապրանքները,
- Վաճառքի հնարավորությունների մերժում, երբ մանրածախ վաճառողներն արգելափակում են արտադրողների կամ մեծածախ վաճառողների մուտքը դեպի իրենց ֆոնդերը՝ պահեստներ, խանութներ և այլն,
- Գովազդված լինելու նվազագույն պահանջի թելադրում, երբ մանրածախ վաճառողները հրաժարվում են վաճառքի ընդունել այն ապրանքները, որոնք բավարար չափով գովազդված և հայտնի չեն սպառողներին և այլն:

Ուսումնասիրության «միջավայրի» տեսանկյունից առանձնանում է նաև այն հանգամանքը, որ զարգացող և բաշխման ոչ կատարյալ համակարգեր ունեցող երկրներին բնորոշ են նաև ոլորտի կանոնակարգման իրավական անկատարությունը, գործարար սովորույթների ոչ ավանդական լինելը, ինչպես նաև շուկաների խոշոր մասնակիցների որոշակի լրբինգային հնարավորություններն այդ օրենսդրության ընդունման և կիրարկման գործընթացում:

Ինչպես նկատելի է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (հետագայում՝ Հանձնաժողով) հրապարակային փաստաթղթերի ուսումնասիրությունից, Հանձնաժողովն իր գործունեության երկրորդ տարվանից սկսած, տարիներ շարունակ, վարույթների իրականացման ժամանակ բազմիցս առնչվել է ներքին շուկայում ապրանքների վաճառքի իրականացման սկզբունքների, ապրանքային շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաև նրանց խմբերի կողմից կիրառվող բաշխման համակարգի հետ կապված խնդիրներին: Այդ խնդիրներն ուղղակիորեն առնչվում են Հանձնաժողովի մանդատի և իրավասությունների կիրառման հետ և ի հայտ են գալիս Օրենքը կիրարկելու ժամանակ:

Եվրոպական Միության կողմից 2006 թվականին իրականացված «Աջակցություն Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին և վերջինիս կարողությունների զարգացում» Ծրագրի ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմին ներկայացված Եվրոպական տարածաշրջանում գերիշխող դիրքի չարաշահմանը և հակամրցակցային գործելակերպին վերաբերող գործերի մեծ մասում նույնպես նկատելի են, որ չարաշահումները բնորոշ են հենց ապրանքների բաշխման համակարգին:

Այս առումով Միջազգային զարգացման հետազոտական կենտրոնի կողմից դրամաշնորհի տրամադրման փաստը չափազանց արդիական էր: Դրամաշնորհի ստացմանն ուղղված աշխատանքային խմբի հետևողական ջանքերի շնորհիվ դրամաշնորհի ստացումն ու ծրագրի իրականացումը հնարավոր դարձավ:

1.1 Ծրագրի նպատակները

Ծրագրի իրականացման նպատակները նախանշվել և հաստատվել են Միջազգային զարգացման հետազոտական կենտրոնի (IDRC) հետ սահմանած ընթացակարգով: Դրանք ուղղակիորեն բխում են ներկայացվող պայմաններից և պահանջներից:

Նմանատիպ ծրագրերի համատեքստում, Ծրագրի հիմնական նպատակներից է վարչական մարմինների և սպառողների¹ գիտելիքների պաշարների ավելացումը և ունակությունների զարգացումը, շահառուներին ոլորտի կարգավորման միջազգային փորձի ներկայացումը և միջազգային կառույցների հետ համագործակցության խթանումը, ինչպես նաև մրցակցության պաշտպանության քարոզչությանն ուղղված գործարար միջավայրի բարելավմանը ուղղված միջոցառումների կազմակերպումը:

Ծրագրի առանձնահատուկ նպատակները նյութականացվել են սույն «Ավարտական հաշվետվության» մեջ արձանագրվող ուսումնասիրությունների, գնահատականների և առաջարկությունների տեսքով: Ծրագիրն իրականացվում է աշխատանքային խմբի և փորձագետների ջանքերով: Այս մասնագիտական խումբը նախագծել է տեխնիկական առաջադրանք, որի նպատակն է իրագործել հետևյալ խնդիրները.

¹ Սույն Ծրագրի տրամաբանությունից ելնելով, սպառողներ են համարվում խանութները և վաճառքի կետերը ներկայացնող անձինք:

1. Ստանալ տեղեկատվություն Եվրոպական Համայնքի կողմից ընդունված և կիրառվող կամ միջազգայնորեն ընդունելի այլ նորմատիվ ակտերի կամ սովորութային իրավունքի նորմերի վերաբերյալ, որոնք կարգավորում են բաշխման համակարգն առհասարակ և բացառիկ բաշխման «թույլատրելի» համակարգի և մրցակցային հիմնախնդիրների հարաբերակցությունը մասնավորապես և, եթե առկա են նման կարգավորման մեխանիզմներ, ստանալ բավարար գիտելիքներ դրանց մասին, ներկայացնել ըստ պատկանելության:



Աշխատանքային խմբի հերթական հանդիպումը փորձագետի հետ
Աջ կողմում՝ Ա.Հակոբյան, Հ Արամյան, Կ.Փոլադյան
Չախ կողմում՝ Պ.Դարայան, Գ.Գրիգորյան

2. Ընդունված մեթոդաբանության համաձայն կատարել ընտրանք և հարցում խանութների շրջանում պարզաբանելու համար միջազգայնորեն ընդունելի (ԱՄՆ ՄՁԳ փորձագետ Դեյվիդսոնի և ԵՄ փորձագետ Խ. Գագոիտուրիայի զեկույցները) բաշխման համակարգում դրսևորվող գերիշխող դիրքի չարաշահումներից մեկը հանդիսացող քանակի հարկադրման (նվազագույն վաճառքի քանակ) տարածվածության աստիճանը հայաստանյան բաշխման համակարգում գնահատելու համար և արդյունքների հիման վրա կատարել համապատասխան առաջարկություններ:

3. Գիտելիքների պաշարի ավելացման և ճանաչողության բարձրացման տեսանկյունից դիտարկել բաշխման համակարգերին բնորոշ միջազգայնորեն հայտնի ու կիրառվող որոշ ուղղություններ²: Վերոհիշյալի տեսանկյունից խնդիրն է դիտանցել հայրենական բաշխման համակարգը թվարկված հանգամանքների գոյության կամ բացակայության տեսանկյունից³:

4. Գնահատել գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներով և օլիգոպոլ տիպի ապրանքային շուկաներում բաշխման համակարգերի առկա հիմնախնդիրները, դրանց առաջացմանը նպաստող հանգամանքները, օրենսդրական կարգավորվածության աստիճանը և այլն: Մասնավորապես, ուսումնասիրել տնտեսվարող սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքը վերջնական սպառողին հասնելու ճանապարհին բաշխման համակարգի կազմակերպման հետևանքով թանկանալու հանգամանքը և այլն:

² **վաճառքի հնարավորության մեթոդ** - երբ մանրածախ վաճառողները մերժում են արտադրողների կամ մեծածախ վաճառողների մոտքն իրեց խանութներ,

գովազդված լինելու նվազագույն պահանջի թելադրում - երբ մանրածախ վաճառողները հրաժարվում են վաճառքի ընդունել այն ապրանքները, որոնք բավարար չափով գովազդված և հայտնի չեն սպառողներին:

³ Խնդրի ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են 4-րդ գլխում:

2. Բացառիկ բաշխման համակարգ - սահմանումներ, օրենսդրություն, սովորութային իրավունք

2.1 Բաշխման համակարգի և «Բացառիկ բաշխման համակարգի» ոլորտներում կիրառվող տերմինների նկարագրությունը

Ինչպես հայտնի է, ՀՀ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) գլխավոր նպատակն է հանդիսանում պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում: Մրցակցային քաղաքականության իրականացման և Օրենքի կիրարկման ժամանակ վերջնական սպառողների իրավունքների պաշտպանությունը նշանակալից տեղ պետք է ունենա և արժանանա բավարար ուշադրության սպառողների իրավունքների պաշտպանությանը կոչված մարմինների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից: Միաժամանակ, սպառողների շահերի խախտումներ կարող են դրսևորվել նաև ապրանքների բաշխման համակարգերում, ուստի այդ համակարգի վերաբերյալ գիտելիքների ավելացման խնդիրը գնալով կարևորվում է:

Տվյալ համատեքստում, ստորև ներկայացվում են այս ոլորտին վերաբերող մի շարք տերմինների բացատրություններ, որոնք կիրառելի են ինչպես միջազգային, այնպես էլ հայկական բիզնես պրակտիկայում:



Հանդիպում պետական մարմինների ներկայացուցիչների հետ
Գ.Քոչարյան, Ա.Ջարգարյան, Պ. Դադայան (Ծրագրի փորձագետ) և Վ.Գրիգորյան

Հասկացությունների նկարագրության համար որևէ սկզբնաղբյուր չի նշվում, որովհետև դրանց նկարագրման համար դիտարկվել են բազմաթիվ աղբյուրներ (հիմնականում ԵՄ հրապարակումներ) և այլ գրականություն, որի ցանկը բերված է Հավելված 1-ում:

Բաշխում, դիստրիբուցիա (distribution) -

Ապրանքները պահեստավորելու և սպառողներին առաքելու գործընթացը մեծածախ և մանրածախ վաճառողների միջոցով: Ապրանքների պարզ բաշխումը ներառում է բաշխման ուղիների ընտրությունը և ժամանակին ու առանց որակական կորուստների ապրանքների մուտքը նախանշված շուկաներ (սպառողներին): Բաշխման միասնականացված համակարգը ընդգրկում է պահուստի ստեղծումը, պահեստավորումը, բեռների մշակումը, փոխադրումը և պատվերների ժամանակին ու որակով կատարումը:

Բաշխիչ, Դիստրիբյուտոր (distributor) - Առևտրի անկախ միջնորդ կամ միջնորդների շրջայի օղակ, որն արտադրողների առաջարկվող նյութական բարիքները կամ ծառայությունները հասցնում (մատակարարում) է սպառողներին:

Բաշխման ուղիներ – ձեռնարկությունների ցանց, որն ապրանքն արտադրողից հասցնում է սպառողին: Ըստ գործառնությունների, բաշխման բնորոշ ուղին բաղկացած է երեք հիմնական գործողություններից՝ ապրանքի արտադրություն, մեծածախ և մանրածախ վաճառք: Գործնականում այդ գործողությունները կարող են իրականացվել բաշխման ուղու ամեն մի որոշակի հատվածում առանձին մասնագիտացված ձեռնարկությունների կողմից կամ էլ ուղղաձիգ կառուցվածք ունեցող ձեռնարկության կողմից:

Բացառիկ (էքսկլյուզիվ) բաշխում, գործարք - գործելակերպ, երբ մատակարարը (արտադրողը) բաշխիչներին կամ մանրավաճառներին գրավոր պարտավորություն է դնում վաճառել միայն իր ապրանքները: Բացառիկ գործարքները խրախուսվում են տարբեր եղանակներով՝ արտոնյալ զեղչերով, փոխատվություններով և այլն: Այն օգնում է

մատակարարին մեծացնելու վաճառքի ծավալները և պահպանելու շուկայաբաժինը: Սակայն սահմանափակում է մրցակցությունը, երբ կիրառվում է գերիշխող դիրք ունեցող ձեռնարկության կողմից:

Բացառիկ թույլտվություն (լիցենզիա), բացառիկ դիստրիբյուտոր - փաստաթուղթ, ըստ որի, մի ձեռնարկություն բացառիկ իրավունք է տալիս մյուսին որոշակի տարածքում և որոշակի ժամանակահատվածում օգտագործելու իր արտադրանեղանակը, բաշխման ուղիները, թողարկել իր արտադրանքը կամ (սա ավելի կիրառական է հետխորհրդային երկրների համար) վաճառելու իր արտադրանքը:

Ազենտ (դիլեր) - սովորաբար այս տերմինն օգտագործում են տեղական առևտրային կազմակերպությունների վերաբերյալ: Սակայն հարկ է նշել, որ հաճախ օրենսդրություններում «ազենտ (դիլեր), ազենտային (դիլերային) ցանց» տերմինները իրավական բնույթ չեն կրում (չեն հիշատակվում և չեն կարգավորվում գործող օրենսդրությամբ), և ավելի շուտ հանդիսանում են գործարար պլենգ: Պրակտիկայում այս տերմինի տակ հասկացվում են առևտրային կազմակերպությունները, որոնք մշտապես գնում են արտադրանք տեղական շուկաներում վերավաճառքի համար: Ազենտը կարող է լինել ֆիզիկական անձ կամ կազմակերպություն:

Հիմնակալ – Պրինսիպալ (principal) - հիմնակալ անձ, որի անունից գործում է ազենտը (դիլերը):

Ֆրանչայզ (վստահագիր), ֆրանչայզինգ (վստահագրում) - Վստահագիր որոշակի ժամանակահատվածում իր ապրանքը (արտադրանքը, ծառայությունը), արտադրելու կամ վաճառելու վերաբերյալ, որ վստահագրող ընկերությունը (franchiser), պարտավորագրի համաձայն, տալիս է վստահագրյալ անհատին կամ ընկերությանը (franchisee): Վստահագիրը բացառիկ է, երբ տրվում է մեկ վստահագրյալի և ոչ բացառիկ, երբ տրվում է մի քանիսին: Վստահագրյալը վստահագրի դիմաց եկամտամաս է վճարում վստահագրողին: Իր հերթին վերջինս իրեն տրամադրում է նոր ապրանք կամ վաճառքի նոր եղանակ, թրեյնինգ, տեխնիկական օգնություն, հատուկ սարքավորում, ապահովում ապրանքի գովազդումը, խթանումը և պատվերները:

Հայաստանի գործող օրենսդրության մեջ ևս անդրադարձ կա այս հարցերին և որոշ տերմիններ անգամ լեզվալիզացված են: Այդ տերմինների սահմանման, միջազգային ընդունված չափանիշներին դրանց համապատասխանության և կիրառելիության խնդիրներին անդրադարձ է կատարված սույն գլխի 2.3. բաժնում՝ ստորև:

2.2 Ապրանքային շրջանառության (բաշխման) ոլորտը կարգավորող ԵՄ և միջազգայնորեն ընդունելի այլ նորմատիվ ակտերը

Համաձայն «Տեխնիկական առաջադրանք»-ի համապատասխան դրույթի, կատարվել է բավականին մանրակրկիտ ուսումնասիրություն, նպատակ ունենալով ստանալ տեղեկատվություն Եվրոպական Համագործակցության կամ Համայնքի, Եվրոպական Միության անդամ երկրների մրցակցային կամ այլ կարգավորող մարմինների կողմից կիրառվող ԵՄ և միջազգայնորեն ընդունելի այլ նորմատիվ ակտերի վերաբերյալ, որոնք կարգավորում են բաշխման համակարգն առհասարակ և բացառիկ բաշխման «թույլատրելի» համակարգի և մրցակցային հիմնախնդիրների հարաբերակցությունը:

Ուսումնասիրվել են Եվրոպական Միության մրցակցության հարցերով Գլխավոր Տնօրինության (ԵՄ մրցակցության Գլխավոր Տնօրինություն) բոլոր ուղեցույցները և մասնագիտական գրականություն: Խնդրո առարկայի կապակցությամբ համապատասխան հարցումներ են արվել ԵՄ մրցակցության ԳՏ, ինչպես նաև Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC) փորձագետներին:

Արդյունքների ամփոփումից հետո պարզաբանվել է, որ այս ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերը շատ չեն և այն հիմնականում կարգավորվում է, այսպես կոչված, սովորութային իրավունքի նորմերով: Համաձայն «Տեխնիկական առաջադրանք»-ի դրույթների, խնդիր էր դրված պարզաբանել ուսումնասիրության առարկայի մասին ԵՄ «հավաքական» օրենսդրության դրույթները: ԵՄ անդամ երկրների «ներերկրային» նորմատիվ ակտերին մանրամասն անդրադարձ չի կատարվել՝ պարզաբանվել և թվարկվել են որոշակի եվրոպական երկրներ, որոնք նման օրենսդրություններ ունեն:

Այնուամենայնիվ, ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն այդ ակտերի վերաբերյալ.

- «Ապրանքների միջազգային առևտրում ներկայացուցչության մասին» ՅՈՒՆԵԴՐՈՅՏ-ի կոնվենցիան (Unidroit Convention on Agency in the International Sale of Goods), ընդունվել է 1983 թվականի փետրվարի 17-ին Ժնևի դիվանագիտական կոնֆերանսի կողմից: Կոնվենցիան կիրառվում է այն դեպքերում, երբ Հիմնակալը (Պրինցիպալը) և երրորդ անձն ունեն իրենց ձեռնարկությունը տարբեր երկրներում և ազենտը Հիմնակալի կողմից լիազորված է ապրանքի վաճառքի պայմանագիր կնքելու երրորդ անձանց հետ: Կոնվենցիան տարածվում է նաև այն ազենտային համաձայնագրերի վրա, որոնք լիազորում են ազենտին միայն ներկայացնելու հաճախորդներին Հիմնակալին: Կոնվենցիան կարելի է կիրառել անկախ նրանից՝ ազենտը գործում է իր անունից, թե Հիմնակալի: Այն կարգավորում է Հիմնակալի և ազենտի, ինչպես նաև երրորդ անձանց վերաբերող հարաբերությունները: ՅՈՒՆԵԴՐՈՅՏ-ի կոնվենցիան (ՅՈՒՆԵԴՐՈՅՏ-ի Սկզբունքները) տրամադրում են աղեկվատ լուծումներ պայմանագրային իրավունքի ընդհանուր նշանակության հարցերի մեծագույն մասի համար (օրինակ՝ պայմանագրի կնքում, նրա գործունեությունը, իրականացումը, չկատարումը, վնասներ և այլն):

- «Անկախ առևտրային ազենտների վերաբերյալ» ԵՄ 1986 թվականի դեկտեմբեր 18-ի թիվ 86/653 Դիրեկտիվ; (Council Directive on the coordination of the laws of the Member State relating to self-employed commercial agents); № 86/653/EEC:

Այն առնչվում է Հիմնակալի և Ազենտի հարաբերությունների կարգավորմանը: Վերաբերվում է ինչպես անկախ Ազենտներին (որոնք լիազորություն ունեն պայմանագրեր կնքել Հիմնակալի անունից), այնպես էլ նրանց, ովքեր լիազորված են համապատասխան բանակցություններ վարելու:

- Ուղղահայաց համաձայնությունների և համաձայնեցված գործողությունների կատեգորիայի պայմանագրեր. 81/3/հոդվածի կիրառումն ապահովող ԵՄ թիվ 2790 դիրեկտիվ; Commission Regulation (EC) No 2790/1999 of 22 December 1999 on the application of Article 81(3) of the Treaty to categories of vertical agreements and concerted practices.

Այն սահմանում է ԵՄ երկրների տարածքում ուղղահայաց համաձայնությունների կիրարկման արգելանքներից բացառությունների ներկայացման կարգը: Հատուկ ուշադրության է արժանի այն դեպքը, երբ դիստրիբյուտորին արգելվում է մրցակից ապրանքներ վաճառել (կամ գնել ապրանքները բացառապես մի մատակարարից): Եվ ուրեմն, ըստ 2790 կանոնակարգի, այդպիսի արգելանքի գործունեության ժամկետը չի կարող գերազանցել 5 տարին, իսկ սա նշանակում է, որ այդ ժամկետի ավարտից հետո նշված դրույթը կորցնում է ուժը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ արգելանքի այս դրույթը շատ կարևոր է դիստրիբյուտորական պայմանագրերի համար (քանզի ոչ մի մատակարար չի համաձայնի, որ դիստրիբյուտորը իրացնի նաև մրցակից ապրանքներ), Եվրամիության երկրների համար տիպային դիստրիբյուցիոն պայմանագրերը ենթադրում են (կնքվում են) 5 տարվա գործունեության ժամկետ: Իհարկե սա չի խանգարում, որ այդ ժամկետի ավարտից հետո կնքվի նոր պայմանագիր:

- ՅՈՒՆԿԵԹՍԳ-ի մինիմալ ստանդարտները Ծովային (Նավային) Ազենտների համար, UNCTAD Minimum Standards For Shipping Agents (1988):
- Շվեդիայի, Ֆինլանդիայի, Գանիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Բելգիայի օրենքները (Առևտրային օրենսգրքերը) Առևտրային ազենտների վերաբերյալ:
Ուսումնասիրված գրականության⁴ ցանկից (Հավելված 1) կարող եք ընտրել վերոհիշյալ փաստաթղթերի և ակտերի մանրամասն նկարագրությունը:

Հաշվի առնելով մի շարք նյութերի կիրառական բնույթը, դրանք բերվում են հավելվածների տեսքով: Հավելվածներ 2-ում և 3-ում բերված են համապատասխան տիպային պայմանագրերի օրինակները (ռուսերեն, անգլերեն), որոնք կարող են կիրառվել նաև հայաստանյան գործարար պրակտիկայում:

2.3 Բաշխման համակարգին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

Ինչպես նշվել է սույն Հաշվետվության 1.2. բաժնում, ՀՀ գործող օրենսդրությունը նույնպես անդրադարձներ ունի խնդրո առարկային:

Այսպես, ըստ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի, սահմանվում են հետևյալ հասկացությունները.

Դիլեր՝ կազմակերպության արտադրանքի իրացման ցանցի մեջ մտնող և նրա գործակալը հանդիսացող արտադրանքի մանրածախ առևտրով զբաղվող վաճառող,

Դիստրիբյուտոր՝ արտադրական կազմակերպություններին շուկայում ներկայացնող վաճառող, որն արտադրական կազմակերպությունների հետ կնքված մատակարարման պայմանագրով մեծածախ ձեռքբերումների հիման վրա իրականացնում է իրացման գործունեություն:

ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրք»-ը նույնպես անդրադառնում է խնդրին, սակայն միայն մտավոր գործունեության արդյունքների մասով՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, տալով հիշյալ տերմինների սահմանումները, միևնույն ժամանակ փորձ է կատարում կանոնակարգելու որոշակի հարաբերություններ, մասնավորապես՝

«...Հոդված 22. Դիստրիբյուտորի և դիլերի գործունեությունը Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է միայն համապատասխան պայմանագրի առկայության դեպքում:

Հոդված 23. Դիստրիբյուտորը և դիլերը պարտավոր են ապահովել սույն օրենքով սահմանված՝ վաճառողին և կատարողին ներկայացվող պահանջների կատարումը...»:

Ծրագրի աշխատանքների սույն հատվածի կազմակերպման էական բաղադրիչ է հանդիսացել շահագրգիռ այլ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների համապատասխան մասնագետների հետ խնդրո առարկայի մասով ՀՀ օրենսդրությանն առնչվող հարցերի շուրջ քննարկումների նախաձեռնումն ու իրականացումը: Ծրագրի աշխատանքային խմբի նախաձեռնությամբ կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ հարկային պետական ծառայության, ՀՀ մաքսային պետական կոմիտեի և ՀՀ կենտրոնական բանկի

⁴ Գրականությունը Ծրագրի ավարտից հետո նախատեսվում է հանձնել Հանձնաժողովի գրադարան:

համապատասխան մասնագետների հետ: Համաձայն տվյալ հանդիպումների ժամանակ հնչած տվյալ մարմինների ներկայացուցիչների հայտարարությունների, ինչպես նաև ստացված պաշտոնական գրավոր կարծիքների⁵ պարզ է դարձել, որ հանրապետությունում բացառիկ բաշխմանը, դիատրիբյուտորների գրանցմանը, ներկրողների և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայությամբ ձևավորված բաշխման համակարգերում հարկային պարտավորություններին առնչվող, ինչպես նաև մաքսային ձևակերպումների ու արարողակարգերի կիրառման կապակցությամբ ՀՀ համապատասխան ոլորտային օրենսդրություններն առանձնահատուկ, տարբերակված և համակարգված դրույթներ չեն պարունակում և, բնականաբար, առանձնահատուկ վարչարարություն մույնպես չի կիրառվում:

Ինչ վերաբերում է ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրության կողմից սահմանվող հասկացություններին և դրույթներին, ապա համադրության մեջ դիտարկելիս պարզ է դառնում, որ դրանք, մեր կարծիքով, լավագույնս չեն հատկորոշում երևույթներն ու խնդիրները և կարգավորում առաջացնող հարաբերությունները:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հայաստանյան բաշխման համակարգում հիմնականում վերջին տարիներին նկատվում է, այսպես կոչված, «բացառիկ բաշխման հավակնորդների» առանձնահատուկ ակտիվություն և կտրուկ աճ, խնդիրը նաև խիստ կիրառական նշանակություն է ստանում:

Վերոհիշյալի համատեքստում, ուսումնասիրության արդյունքում առաջանում են բազմաթիվ հարցեր և խնդիրներ, որոնք ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն: Միաժամանակ, սույն ուսումնասիրության արդյունքում հնարավոր չէ համոզված պնդել, որ նման կարգավորումն իրականում անհրաժեշտ և/կամ նպատակահարմար է:

Ինդրի կարգավորման դաշտում որոշակի դեր կարող է խաղալ ՀՀ օրենսդրությունը, որը կարգավորում է հեղինակային իրավունքի և ապրանքային նշանների գրանցման ոլորտներում առաջացող հարաբերությունները, սակայն դա էլ համալիր կարգավորում չի որակվում, քանի որ այն չի կարգավորում բաշխման համակարգում առաջացող և ոչ մի հարաբերություն:

Առաջացող և, մեր կարծիքով, պատասխաններ ենթադրող խնդիրները բազմազան են, որոնցից հիմնականներն են.

- Անհրաժեշտ է արդյոք բացառիկ բաշխման համակարգի մասնակիցների պետական գրանցման համակարգն առհասարակ:
- Կառաջա՞նա արդյոք շուկաների համակենտրոնացման աստիճանների բարձրացում, եթե պետականորեն սկսեն պաշտպանվել բացառիկ ներկրողների իրավունքները և նրանք սկսեն օրենսդրորեն առավելություններ ստանալ այլ մրցակից սուբյեկտների նկատմամբ:
- Կարգավորման կարի՞ք են զգում արդյոք բացառիկ բաշխողի և նույն ապրանքն այլ սխեմաներով ներկրողի միջև առաջացող հարաբերությունները, բարեխիղճ ներկրող է արդյոք այլ վայրից⁶ նույն ապրանքը ներկրողը: Դեղերի ներկրմամբ զբաղվող ընկերությունների համար սույն հարցը հռետորական չէ և շատ կիրառական նշանակություն ունի⁷:

⁵ Գրություն է ստացվել նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից:

⁶ Ենթադրվում է, որ «մայր» մատակարարը տվյալ երկրում որևէ այլ ընկերության տվյալ ապրանքը չի մատակարարում:

⁷ Որպես կանոն, պետական գրանցման սահմանված համակարգով գրանցված և բացառիկորեն ներկրվող դեղորայքի մատակարարմամբ զբաղվող ընկերությունները համարում են, որ մեկ այլ վայրից և սխեմայով ներկրված նույն դեղորայքը օրինական չէ: Տվյալ դեղի այլ ներկրողները, բնականաբար, հակադարձ կարծիքի են: ՀՀ տնտեսական դատարանը մնանատիպ որոշակի հայցեր է դիտարկում յուրաքանչյուր տարի:

- Առաջանում է արդյոք անհավասար մրցակցություն, երբ բացառիկ բաշխողը գումարներ է ներդնում ապրանքի գովազդման և իրացմանը նպաստող միջոցառումների իրականացման համար և մեկ այլ ներկրող նույնպես վաճառում է տվյալ ապրանքը՝ տեղավորվելով բացառիկ բաշխողի «հովանոցի» ներքո և այլն:

Վերոհիշյալ և տվյալ ոլորտին վերաբերող այլ չհիշատակված հարցերն ի հայտ եկան Ծրագրով նախանշված կոնկրետ առաջադրանքներն իրականացնելու գործընթացին զուգահեռ և լուծում չեն ստացել սույն ուսումնասիրության շրջանակներում: Դրանք առանձին, մանրամասն և նպատակային ուսումնասիրության կարիք են զգում: Առհասարակ, հիմնական գնահատականն այստեղ հետևյալն է՝ ինչպիսին պետք է լինի նախապատվելի օրենսդրական կարգավորման մոդելը Հայաստանի Հանրապետության բաշխման համակարգի համար:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով դեղորայքի շուկայի համար քննարկվող խնդիրների առանձնահատուկ նշանակությունը, ձեռնարկվել է սահմանափակ էլեկտրոնային հարցում և քննարկումներ դեղորայքի դիստրիբյուտորների շրջանում:

Ստորև ներկայացվում են հարցման արդյունքները.

<p>Հարցման մասնակիցներից մեկը հանդիսանում է արտադրողի (մայր գործարանի), իսկ մյուսը՝ այլ արտերկրյա արտադրողի դիլերի դիստրիբյուտորը: Մեկ դիստրիբյուտորի մատակարար երկիրը Ռուսաստանի Դաշնությունն է, իսկ մյուսը չի ցանկացել նշել: «Ինչպիսի՞ն է մատակարարի հետ Ձեր համագործակցության իրավակազմակերպման հիմքը» հարցին պատասխանել են, որ դիստրիբյուտորներից մեկն աշխատում է արտերկրյա մատակարարի հետ ստանդարտ պայմանագրի միջոցով, իսկ մյուսը՝ ուղղակի համագործակցության պայմանագրի միջոցով: Դիստրիբյուտորներից մեկն ապրանքը վաճառում է մատակարարի նախանշած պայմաններով և գնով, իսկ մյուսը մատակարարի հետ համագործակցում է հաշիվ ապրանքագրի հիման վրա: Դիստրիբյուտորներից մեկը մատակարարի հետ իրենց հարաբերություններում ռիսկ է համարում Հայաստանի Հանրապետությունում փոփոխվող օրենսդրական ակտերը, իսկ մյուսը՝ հայերեն մակնշման ծախսերից և բեռի ժամանակին տեղափոխումից ելնելով՝ փոքր պատվերներ չընդունելը:</p> <p>Դիստրիբյուտորներից մեկի կարծիքով, բացառիկ բաշխման համակարգը տվյալ շուկայում ուղղակի գովազդի առավելություն է տալիս, իսկ մյուսին՝ կատարելու նվազագույն ծախսեր գովազդի կամ ապրանքի իրացմանը նպաստող այլ միջոցառումների վրա:</p> <p>Երկու դիստրիբյուտորներն էլ ծանոթ են ՀՀ օրենսդրության մեջ բացառիկ բաշխման համակարգի իրավական կարգավորման դրույթներին: Դիստրիբյուտորներից մեկը բավարար է համարում բացառիկ բաշխման համակարգի իրավական կարգավորումը, իսկ մյուսը՝ ոչ բավարար՝ մատնանշելով ոչ պաշտպանված լինելը կեղծ ապրանքներից: Դիստրիբյուտորները գտնում են, որ հանրապետությունում դիստրիբյուտորները ՀՀ օրենսդրությամբ պաշտպանված չեն, քանի որ ունեն ավելի շատ պարտավորություններ, քան պաշտպանված են օրենքով: Դիստրիբյուտորներից մեկն ունի մրցակիցներ տվյալ շուկայում, որի մրցակցային հնարավորությունները գնահատում է ցածր:</p> <p>Դիստրիբյուտորները կարծում են, որ կան խոչընդոտներ իրենց գործի զարգացման համար, որոնցից են պահանջարկի պակասը ու օրենսդրական բացթողումները, ինչպես նաև կամայական մոտեցումներից պաշտպանվածությունը:</p> <p>«Ձեր գնահատմամբ առկա՞ է արդյոք տվյալ շուկայում արդար և առողջ մրցակցություն» հարցին երկու դիստրիբյուտորներն էլ դժվարանում են պատասխանել, քանի որ գտնում են, որ ընկերություններն ունեն իրենց ներքին կարգավորումները:</p>

2.4 Ապրանքային շրջանառության (բաշխման) ոլորտի վերաբերյալ սովորութային իրավունքի նորմերը

Ծրագրի նախանշած պայմաններով, որպես կարևոր նպատակ էր սահմանված նաև «բաշխման ոլորտի մասին բավարար գիտելիքների ստացումը և ըստ պատկանելության ներկայացումը», ուստի ուսումնասիրվել են նաև միջազգային «սովորութային իրավունքի նորմերը»:

Ա. Իրավական հիմքերը

Դիստրիբյուտորական համաձայնագիրը (հոմանիշը - դիստրիբյուտորական պայմանագիր, անգլերեն՝ Distributorship կամ Distributor Contract/Agreement) համաշխարհային առևտրում համարվում է ապրանքների և ծառայությունների մատակարարման կազմակերպման լայն տարածում ունեցող ձևերից մեկի իրավական հիմքը: Ամենաընդհանուր ձևով Դիստրիբյուտորական պայմանագիրն իրենից ներկայացնում միջազգային առևտրային պայմանագիր, համաձայն որի, դիստրիբյուտորին տրվում է ներկայացուցչության իրավունք (երբեմն նաև՝ միակ կամ բացառիկ) որոշակի տարածքում և/կամ ժամանակահատվածում որոշակի արտադրանքի վերաբերյալ:

Բ. Դիստրիբյուտորական պայմանագրերի սկզբունքային պայմանները

Իրավա-տեխնիկական տեսանկյունից Միջազգային դիստրիբյուտորական համաձայնագիրը հանդիսանում է բավականին բարդ փաստաթուղթ և ըստ այդմ էլ մանրակրկիտ մշակման կարիք ունի: Պայմանագիրը կնքելիս կողմերն ունեն լրիվ ազատություն և այն պետք է օգտագործեն հավասարակշռված իրավական հիմք ստեղծելու նպատակով, որը պետք է լինի արդար, փոխադարձ ընդունելի և ճշգրտորեն համապատասխանի նրանց գործունեության հստակ պահանջներին:

Գ. Դիստրիբյուտորական պայմանագրերի առևտրա-սովորութային նորմերը և Դիստրիբյուտորական պայմանագրերի մոդելները (տիպերը)

Միջազգային առևտրային պրակտիկայում կիրառվում են Դիստրիբյուտորական պայմանագրերի երկու տիպեր, և պայմանագրում պետք է պարզ և միանշանակ նշվի, թե որ տիպն է ենթադրվում:

Առաջին տիպ՝ «կոշտ» - դիստրիբյուտորը պարտավորվում է տեղադրել ամենամյա պատվերներ արտադրողի մոտ,

Երկրորդ տիպ՝ «մեղմ» - դիստրիբյուտորը պարտավորվում է տեղադրել այդպիսի պատվերներ՝ ըստ արտասահմանյան հաճախորդներից դրանց ստացման:

Չնայած այն հանգամանքին, որ երկու դեպքում էլ դիստրիբյուտորը պարտավորվում է տեղադրել պատվերն իր սեփական անունից (այլ ոչ թե որպես արտասահմանյան հաճախորդի /ազենտ) և կրել անձնական պատասխանատվություն գնի համար, նրա պարտավորությունների իմաստները տարբեր են: Երկրորդ դեպքում արտահանողը պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե նա ի վիճակի չէ փոխանցելու արտադրողին իր կողմից ստացված հաճախորդների պատվերները: Մինչդեռ առաջին դեպքում նա պարտավոր է պատվիրել ապրանքներ պայմանավորված արժեքով, անկախ դրանց ստացումից: Երբեմն դիստրիբյուտորի կողմից որոշակի բյուջեի (ծավալի) չկատարումը ենթադրում է (նախատեսում է) պայմանագրի լուծում:

Ստորև ներկայացվում են դիստրիբյուտորական պայմանագրի հոդվածների երկու տարբերակներ՝ «մեղմ» - դիստրիբյուտորի պարտավորությունները իրացման ծավալի վերաբերյալ արտահայտված են դեկլարատիվ ձևով, և «կոշտ» - որտեղ սահմանվում է իրացման հստակ ծավալ, որի չկատարումը հանգեցնում է պայմանագրի լուծման:

Դիստրիբյուտորը պարտավորվում է ներդնել բոլոր ջանքերը տվյալ տարածքում տվյալ արտադրանքի իրացման շուկայի ծավալների ընդլայնման համար, նա պարտավոր է մշտապես առաջարկել, գովազդել, մասնակցել ցուցադրումների և այլ միջոցներով խթանել Արտադրանքի իրացմանը տվյալ տարածքում:

NN ժամանակահատվածում իրացման ծավալը պետք է կազմի նախօրոք նախատեսված գումարը. Եթե NN ժամանակահատվածի ավարտին վաճառքի

մախատեսված ծավալները չեն կատարվում, ապա մատակարարին իրավունք է վերապահվում անհապաղ լուծել սույն Պայմանագիրն՝ առանց լրացուցիչ իրազեկման:

**Դ. Ենթադիստրիբյուտորական և ենթաազենտային համաձայնագրեր:
Ենթադիստրիբյուտորական և ենթաազենտային ցանցերի ձևավորումը**

Արտասահմանյան արտադրողի հետ դիստրիբյուտորական պայմանագրի կնքումը (ինչպես նաև տեղական արտադրողի և օտարերկրյա դիստրիբյուտորի հետ) լոկ առաջին քայլն է տեղական շուկայում (պայմանագրային տարածքում) ապրանքների և ծառայությունների արդյունավետ իրացման հասնելու համար: Հաջորդ քայլն այդ ճանապարհին հանդիսանում է դիստրիբյուտորի կողմից վերջնական սպառողի հետ արդյունավետ փոխհարաբերության հաստատումը, ինչում, անշուշտ, շահագրգռված են երկու կողմերն էլ՝ և դիստրիբյուտորը, և արտադրողը: Վերջնական սպառողի հետ այդ փոխհարաբերությունը կարող է կազմակերպվել տարբեր եղանակներով:

- Պարզագույն եղանակ կարող է հանդիսանալ դիստրիբյուտորի կողմից հնարավոր հաճախորդների փնտրտուքը, արտադրանքի գովազդը, արտադրանքի ցուցադրման նպատակով նրա կողմից հաճախորդների հետ սկզբնական կապերի հաստատումը, մատակարարման պայմանագրերի (առք ու վաճառքի) կնքումը, ետվաճառքային սպասարկման կազմակերպումը և այլն: Այս եղանակն ավելի շատ կարող է արդարացվել միանգամյա թանկարժեք արտադրանքի իրացման դեպքում (այսպես կոչված, «կետային բիզնես»):
- Ոչ միանգամյա արտադրանքը (արդյունաբերական ապրանքներ, կիսաֆաբրիկատներ, սննդային արտադրանք և այլն) իրացնելիս ավելի հեռանկարային եղանակ է հանդիսանում տեղական առևտրային կազմակերպությունների ներգրավումը կամ ստեղծումը և այդ հիմքի վրա պայմանագրային տարածքի ներսում, այսպես կոչված, դիլերային (ազենտային) ցանցերի ձևավորումը: Դիստրիբյուցիայի այս ձևն, անշուշտ, իրացմանը կտա մեծածախ բնույթ և նշանակալիորեն կմեծացնի ապրանքաշրջանառությունը:

Հիմնակալի (Principal) և դիլերի (agent) միջև իրավական կապը չի սահմանափակվում մատակարարման պայմանագրերով, այստեղ կարող են կիրառվել ինչպես Ենթադիստրիբյուտորական և ենթաազենտային համաձայնագրեր, այնպես էլ միջնորդական և ֆրանչայզինգային (առևտրային կոնցեսիոն) պայմանագրեր (կամ նրանց համակցությունները):

Դիլերային ցանցի ներսում բոլոր առևտրային ներկայացուցիչներն (dealers, agents) ունեն Հիմնակալի (Principal) հետ մերձեցման տարբեր աստիճաններ: Ավելի թույլ կապեր են դիտարկվում ենթադիստրիբյուտորական և միջնորդների հետ համաձայնագրերում:

Ենթադիստրիբյուտորական պայմանագրերի կիրառման ամենագրավիչ հանգամանքն էլ այն է, որ ենթադիստրիբյուտորը, լինելով դիստրիբյուտորի առևտրային ներկայացուցիչը, իրավասու է նրան մատուցել որոշակի կոմերցիոն ծառայություններ, որոնք ի վերջո կհանգեցնեն հարկերի «օպտիմիզացիայի»:

Այս համաձայնագրերի և պայմանագրերի տիպային օրինակները բերված են Հավելված 4-ում և 5-ում:

Ե. Ֆրանչայզինգ (Վստահագրում)

Ֆրանչայզինգն այն հասկացություններից է, որն ընդունված և ճանաչված է գրեթե ողջ միջազգային հանրության կողմից: Ընդհանուր առմամբ, ֆրանչայզինգն իրենից ներկայացնում է ուղղահայաց մոդել: Ֆրանչայզինգի կառուցման հիմքում ընկած է

համաձայնագիրը, ըստ որի, մի կողմը՝ վատահագրող ընկերությունը (franchise) մյուս կողմին՝ վատահագրյալ անհատին կամ ընկերությանը (franchisee) ուղղակի կամ անուղղակի փոխհատուցման հաշվին, տրամադրում է օգտագործելու իրեն պատկանող մտավոր սեփականության (ապրանքային նշաններ, տեխնոլոգիաներ և այլ) օգտագործման իրավունքը:

Չնայած տարբեր երկրներ ունեն վատահագիր հարաբերությունների կարգավորման իրենց յուրահատկությունները, այնուհանդերձ, կարելի է առանձնացնել որոշակի ընդհանուր պայմաններ, որ առկա են արտասահմանյան բոլոր համակարգերի համար, որոնք այս կամ այն կերպ ընդունում և կիրառում են այդ հարաբերությունները.

- Ֆրանչայզերը պետք է ունենա մտավոր սեփականության իրավունք և նրա անհատականացման միջոցներ, օրինակ՝ Պատենտ, նոու-հաու, առևտրային նշան, առևտրային սիմվոլ,
- Ֆրանչայզերի կողմից բիզնեսի վարման (կառուցման) սեփական համակարգի (ներքին ստանդարտների) առակայություն,
- Ֆրանչայզերի կողմից Ֆրանչայզիի պարտադիր աջակցություն (օր.՝ տեխնիկական աջակցություն, ուսուցում, և այլն),
- Ֆրանչայզերի կողմից Ֆրանչայզիի համար որոշ տեղեկատվության բացում Համաձայնագրի ստորագրումից առաջ,
- Ֆրանչայզերի կողմից Ֆրանչայզիի գործունեության պարտադիր վերահսկում,
- Ֆրանչայզիի պարտավորություն՝ վարելու գործերը Ֆրանչայզերի պահանջներին համապատասխան,
- Ավելի շատ սեփական միջոցների հաշվին ներդրումներ կատարելու Ֆրանչայզիի պարտավորությունը,
- Ֆրանչայզիի կողմից Ֆրանչայզերին ուղղակի կամ անուղղակի փոխհատուցման վճարում,
- Հարաբերությունների երկարաժամկետ բնույթ,
- Ֆրանչայզերի կողմից Ֆրանչայզիին ապրանքներ մատակարարելու պարտավորություն և/կամ նրա իրավունքը՝ որոշելու ֆրանչայզիի մատակարարներին,
- Կողմերի իրավական ինքնուրույնությունը (դեպքերի մեծամասամբ),

Անշուշտ, այս համակարգն ապացուցել է իր առավելությունները, սակայն ֆրանչայզինգի մոդելի ռիսկերի թերազնահատումը կարող է բավականին վտանգավոր լինել հետագա վնասների և վարկի կորստի տեսանկյունից, ինչպես ֆրանչայզերի, այնպես էլ ֆրանչայզիի համար՝

- Ֆրանչայզերի կողմից ֆրանչայզինգի մոդելի գրագետ մշակում,
- Կողմերի ազնիվ և վստահելի փոխհարաբերություններ,
- Ֆրանչայզիի կողմից գործի վարման ունակություն,

Այս պայմանների իրագործելիությունը որոշվում է հենց ֆրանչայզերի նպատակներով, հատկապես՝ գործունեության ընդլայնման և համակարգի շահերի և աճի

ղեկավարման նպատակով: Առաջադրված նպատակների իրագործումը կապահովի ամբողջ համակարգի կենսունակությունը և կայուն մրցակցային առավելությունների նվաճումն ու պահպանումը:

2. Խառը Ազենտա-դիստրիբյուտորական պայմանագիր

Ազենտային և դիստրիբյուտորական պայմանագրերը ազենտի (դիստրիբյուտորի) կարգավիճակի տեսանկյունից ունեն որոշակի նմանություններ: Բայց միևնույն ժամանակ երկու համաձայնագրերն էլ հստակ տարբերվում են ինչպես մատակարարի (հիմնակալի), այնպես էլ ազենտի (դիստրիբյուտորի) գործառույթներով, իրավունքների և պարտականությունների ծավալով:

Ազենտի/դիստրիբյուտորի իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև առևտրային ներկայացուցչությունից ակնկալվող շահույթի չափերի տեսանկյունից Համաձայնագրերի երկու տիպերն ակնհայտ առավելությունների հետ մեկտեղ ունեն էական սահմանափակումներ: Ընտրության հարմարավետության նպատակով հիմնական առավելությունները և թերությունները ներկայացվում են աղյուսակի տեսքով.

Դիստրիբյուտորական պայմանագրի հիմնական առավելությունները (+) և Թերությունները (-)

- (+) Սովորաբար դիստրիբյուտորը իրավասու է ազատորեն վերավաճառել ապրանքը՝ լինելով նրա սեփականատերը: Հետևաբար նրա շահույթը չի սահմանափակվում միջնորդավճարների չափերով, ինչն ակնհայտ առավելություն է:
- (-) Մյուս կողմից Դիստրիբյուտորը պետք է տիրապետի ազատ դրամական միջոցների նոր գնումների համար, երբեմն նրա վրա է ընկնում միևնույն իրացման սահմանափակումը (այսինքն, չի կարող ձեռք բերել որոշակի բանականությունից կամ արժեքից ցածր արտադրանք) և այլն:
- (+) Դիստրիբյուտորը առավել ազատ է իր գործողություններում, քանի որ նա հանդիսանում է Հիմնակալի արտադրանքի ազատ վերավաճառողը:
- (-) Բայց միևնույն ժամանակ Դիստրիբյուտորը պայմանագրային տարածքում սպառողների առջև պատասխանատվություն է կրում արտադրանքի որակի համար: Իսկ Հիմնակալի (մատակարարի, արտադրողի) պատասխանատվությունը սպառողների առջև սահմանափակվում է լոկ

Ազենտային Պայմանագրի հիմնական Առավելությունները (+) և Թերությունները (-)

- (+) Ազենտային փոխհարաբերությունների ժամանակ Ազենտից չի պահանջվում ունենալ նշանակալից ազատ դրամական միջոցներ և միջոցներ գնումների և վերավաճառքի կազմակերպման համար:
- (-) Բայց այդ դեպքում ազենտի շահույթը սահմանափակվում է ընդամենը միջնորդավճարներով:
- (+) Բացակայում է Ազենտի պատասխանատվությունը վերջնական սպառողի առջև:
- (-) Այս դեպքում Ազենտի գործառույթները և նրա բիզնեսի ազատությունը էապես սահմանափակ են:
- (+) Մյուս կողմից ազենտը սովորաբար Հիմնակալին ծառայություններ է մատուցում վճարովի հիմունքներով, այդ թվում՝ իրացվող արտադրանքի երաշխիքային սպասարկման, մարկետինգային, ինֆորմացիոն գովազդային և այլ ծառայությունների համար: Այս բոլորն ապահովում են լրացուցիչ եկամուտներ Ազենտի համար:

արտադրանքի անվտանգությամբ և
թաքնված դեֆեկտներով:

- (-) Գիստրիբյուտորը իրացված արտադրանքի սպասարկումը (երաշխիքային սպասարկում և վերանորոգում) սովորաբար կատարում է իր հաշվին: Երբեմն այդ ծախսերը հաշվի են առնվում հետագա գնումների ժամանակ կամ ծածկվում են մատակարարի կողմից գեղչերի ձևով: Բայց միևնույն է, վերջնական սպառողի առջև արտադրանքի որակի համար դիստրիբյուտորը միշտ էլ պատասխանատվություն է կրում:

Երկու տիպերի վերը նշված առավելությունների և թերությունների ցանկը, իհարկե, սրանով չի սահմանափակվում: Ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ հիշատակված գրականության մեջ:

Խառը Ազենտա-Գիստրիբյուտորական Պայմանագիրը փորձում է շրջանցել առանձին պայմանագրերով թելադրված սահմանափակումները և տրամադրել առևտրային ներկայացուցիչին (այսինքն՝ ազենտին/դիստրիբյուտորին) բիզնեսի վարման ավելի ճկուն պայմաններ:

Այն փաստը, որ առևտրային ներկայացուցիչը իրավասու է գործել արտադրանքի ինքնուրույն գնման և իրացման հիմքի վրա, այսինքն՝ որպես դիստրիբյուտոր և միաժամանակ հնարավորություն ունի հանդես գալ ազենտի կարգավիճակով (օրինակ՝ ազատ դրամական միջոցների բացակայության դեպքում նա կարող է պարզապես փոխանցել պատվերները Հիմնակային և ստանալ միջնորդավճարներ), դարձնում է պայմանագրի այս ձևը շատ գրավիչ մարկետինգային ընկերությունների համար:

Պայմանագրի այս ձևին առանձնահատուկ գրավչություն է հաղորդում այն հանգամանքը, որ ինչպես սովորական ազենտային կամ դիստրիբյուտորական պայմանագրերը, խառը ազենտա-դիստրիբյուտորական պայմանագիրը ևս կարող է կնքվել բացառիկության ձևաչափով: Այսպիսով, գործելով տեղական շուկայում երկու տարբերակով, ազենտը (դիստրիբյուտորը) կարող է վստահ լինել, որ մրցակիցները կամ Հիմնակալն իրեն չեն գերազանցի, իրավունքները սահմանափակի և ճնշի:

3. Ապրանքների բաշխման համակարգում շուկայական իշխանություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրություն

3.1. Նախադրյալները

«Տեխնիկական առաջադրանք»-ի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված էր հետազոտել «Գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքներ» ապրանքային շուկայում իրական շուկայական իշխանություն ունեցող տնտեսվարող սուբյեկտի վարքագծին՝ ապրանքների բաշխման համակարգում՝ «Կոկա-Կոլա»-ի գործ: Ինչպես հայտնի է, հիշատակված գործը բացի «Կոկա-Կոլայի» բաշխման համակարգի մասնակիցների կողմից խանութների նկատմամբ պայմանագրի բուն առարկայի հետ առնչություն չունեցող վարքագծային պարտադրանքի առկայության հանգամանքից հատկանշական է նաև նրանով, որ այստեղ առկա էր նաև միջազգային (եվրոպական) մրցակցային օրենսդրության տեսանկյունից բաշխման համակարգում դրսևորվող գերիշխող դիրքի չարաշահումներից մեկը՝ համարվող **քանակի հարկադրումը**, երբ մանրածախ վաճառողներին ստիպում են վաճառել ապրանքի ոչ պակաս, քան սահմանված քանակը: Հայաստանում առ այսօր որևէ նման պահանջ չի որակվել որպես գերիշխող դիրքի չարաշահում:

Ծրագրի իրագործման



աշխատանքային խմբի կողմից «Տեխնիկական առաջադրանք»-ի 2-րդ և 3-րդ կետերի կատարման նախապատվելի ճանապարհ է ընտրվել «Կոկա-Կոլա» ապրանքատեսակն իրացնող վաճառակետերի (հետազայում՝ խանութներ) հարցման իրականացումը: Միաժամանակ, Աշխատանքային խումբը որոշել է չբավարարվել միայն «Գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքներ» ապրանքային շուկայի հարցմամբ և ընդլայնել է հետազոտվող ապրանքատեսակների անվանացանկը, որոնք բաշխման համակարգի ուսումնասիրության տեսանկյունից ակնհայտ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում: Այդ

ապրանքատեսակներն են՝ գարեջուրը, հավի ձուն և պաղպաղակը:

3.2 Մեթոդաբանությունը

Ծրագրի իրագործման աշխատանքային խումբը նախագծել է հարցման և հետազոտության անցկացման կառուցվածքը և խնդիրների իրականացման հաջորդականությունը հետևյալ հիմնական ուղղություններով՝

- խորհրդատվություններ հետազոտության մեխանիզմի, ընթացակարգերի և իրականացնողների խմբերի վերաբերյալ,
- ուսուցում և թեսավորում,
- ընտրանքի իրականացում,
- հետազոտության իրականացում,
- տեխնիկական հաշվետվության ներկայացում:

3.2.1. Հետազոտության թեսավորումն ու մասնակիցների ուսուցումն իրականացվել է Ծրագրի ղեկավարի, Հանձնաժողովի մեկ անդամի (մարզային հարցումներ), աշխատակազմի ղեկավարի և փորձագետի կողմից:

3.2.2. Հետազոտության մասնակիցների ձևավորումը (ընտրանքը)

Հայաստանի Հանրապետության բազմաթիվ և տարաբնույթ խանութները ենթարկվել են դասակարգման հետևյալ երեք խմբերի.

ա) պայմանականորեն A դասի խանութներ են ընդունվել Երևան քաղաքի և հանրապետության խոշորությամբ հաջորդ երկու քաղաքների՝ Գյումրիի և Վանաձորի ամենամեծ և վերջին մի քանի տարիների ընթացքում ստեղծված խանութները, որոնք հանրության մեջ ընդունված է անվանել «Սուպերմարկետներ»,

բ) որպես B դասի խանութներ են ընտրվել նշված քաղաքների համապատասխան թաղամասերում ավանդականորեն գործող համեմատաբար խոշոր և միջին չափերի խանութները, որոնք սկսած խորհրդային տարիներից ունեն իրենց մշտական հաճախորդները և բաշխման համակարգի առանցքային մասնակիցներ են: Էական է համարվել, որ այդ դասի խանութներն ունենան բավարար ծավալի ապրանքաշրջանառություն, խանութի տարբեր բաժանմունքներ և երեքից ավելի վաճառողներ,

գ) C դասի խանութներ են ճանաչվել քաղաքների թաղամասերում և առանձին բակերում ստեղծված փոքր խանութներն ու կրպակները, որոնք պրակտիկորեն ձևավորվել են հետխորհրդային տարիներին և աստիճանաբար ավելացնում են իրենց տեսակարար կշիռը բաշխման համակարգում: Նման խանութները, որպես կանոն, իրականացնում են առևտուրը մեկ վաճառողի միջոցով:

3.2.3. Հարցման անմիջական իրագործումը

Բաշխման համակարգի մասնակից խանութների հարցումներն իրագործել են Ծրագրի համակողմ Հայաստանի Հանրապետության Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի, ինչպես նաև Երևանի ճարտարագիտական համալսարանի ուսանողները⁸ Փորձագետների համակարգման ներքո: Հարցման գործընթացին մասնակցություն են ունեցել նաև մրցակցության պաշտպանության հանձնաժողովի աշխատակազմի երկու աշխատակիցներ:

3.2.4. Հարցման իրականացման եղանակը

Հետազոտությունն իրագործվել է լրացման ենթակա հարցաթերթիկները⁹ խանութների պատասխանատուներին բաժանելու և որոշ պայմանավորված ժամանակահատվածից հետո լրացված հարցաշարերը ժողովելու ճանապարհով: Սակայն եղել են բազմաթիվ դեպքեր, երբ հարցվողները, հատկապես մարզերում, կարիք են ունեցել պարզաբանումների: Որոշ դեպքերում հարցաթերթերը լրացվել են խանութների պատասխանատուների և հարցում իրականացնող աշխատակիցների համատեղ ջանքերով:

3.2.5. Աշխարհագրական բախշվածությունը

Հետազոտությունն ընդգրկում է Երևան քաղաքը և հանրապետության երեք մարզեր՝ Շիրակի մարզ (Գյումրի քաղաք), Լոռու մարզ (Վանաձոր քաղաք) և Կոտայքի մարզի Երևանին հարող հատվածը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքը տնտեսական զարգացման մակարդակով, հետևաբար նաև բաշխման համակարգի զարգացած լինելու աստիճանով, տարբերվում է մարզերից, ապա հետազոտության

⁸ Ընտրվել են Հանձնաժողովում ուսումնական պրակտիկայի ընթացքում հաջողություն ցուցաբերած ուսանողները:

⁹ Հավելված 6-ում բերված են հարցաթերթերի օրինակները:


արդյունքների համապարփակ լինելու նպատակով ընդգրկվել են նաև հանրապետության թվով երկու¹⁰ մարզեր՝ ի դեմս իրենց խոշոր քաղաքների, որոնք միաժամանակ հանդիսանում են նաև մայրաքաղաքից հետո երկրորդ և երրորդ մեծ քաղաքները:

Հարցման են ենթարկվել թվով 99 խանութներ, որոնց աշխարհագրական բաշխվածությունը բերված է 1-ն աղյուսակում:

Աղյուսակ 1

Բնակավայրի անվանումը	A դասի խանութներ	B դասի խանութներ	C դասի խանութներ	Ընդամենը
Երևան	6	23	33	62
Գյումրի	1	10	8	19
Վանաձոր	2	7	9	18
Ընդամենը	9	40	50	99

Աշխատանքային խմբի կողմից խնդիր չի դրվել ընդգրկել հնարավորին մեծ թվով խանութներ, քանի որ ճշգրիտ կատարված ընտրանքի դեպքում, համաձայն աշխատանքային խմբի կարծիքի, հետազոտության արդյունքի տեսանկյունից թվաքանակն էական դեր չի խաղում:



Հարկ ենք համարում նշել, որ հետազոտության արդյունքները կարող են սխալի որոշակի աստիճան պարունակել, ինչը կգերազանցի հատուկ և մասնագիտորեն հարցում իրականացնող կազմակերպությունների կողմից կատարված հարցումների արդյունքներում հնարավոր սխալի աստիճանները՝ հաշվի առնելով հետևյալ հիմնական հանգամանքները.

¹⁰ Կոտայքի մարզի Երևանին հարող հատվածի խանութների հետազոտությունը ներկայացված է Երևան քաղաքի հետ համատեղ և այդ մարզն ուսումնասիրության մեջ առանձին չի ներկայացվում:

- ա) սույն հարցումը հիմնականում կատարվել է համալսարանների միջին կուրսերի ուսանողների ուժերով, որոնք խորը մասնագիտական հմտություններ չունեն սովյալ աշխատանքի իրականացման իմաստով,
- բ) հարցումներն իրականացնող ուսանողները և աշխատակազմի աշխատակիցները մասնավոր հաշվետվության մեջ և արդյունքների բանավոր ներկայացման ժամանակ արձանագրել են, որ հարցումների ժամանակ մթնոլորտը լարված էր, երբեմն հասել է դժկամության դրսևորումների, ինչը, բնականաբար կարող է սովեր գցել պատասխանների վրա՝ անկեղծության և արժանահավատության իմաստով,
- գ) աշխատանքային խումբը նշում է, որ չունի բավարար վստահություն առ այն, որ հարցման ենթարկված խանութների ներկայացուցիչները, հիմնականում B և C դասերի, անհրաժեշտ չափով տիրապետել են հարցման առարկա հիմնախնդիրներին, ամբողջությամբ տեղեկացված են եղել խնդրո առարկայից և պատասխաններն այդ իմաստով կարող են մասամբ որակյալ չլինել, ինչքան էլ որ հարցումներն իրականացնողները ջանացել են տեղում մեթոդական օժանդակություն ցուցաբերել նրանց:

Այնուամենայնիվ, հարցումն ու հետազոտությունն իրականացվել են վաղօրոք համաձայնեցված և սահմանված ընթացակարգով և հիմնականում համապատասխանել են գործընթացների նկատմամբ ներկայացվող պահանջներին:

Աշխատանքային խումբը հնարավորինս պահպանել է հարցման արդյունքներն անկողմնակալորեն վերլուծելու և ներկայացնելու որդեգրած սկզբունքը:

Ստորև ներկայվում են հարցման ավարտից հետո ի հայտ եկած և հետազոտության տեսանկյունից առանցքային հանդիսացող արդյունքները:

3.3 Հետազոտության արդյունքները


Հարցման անցկացման և հետազոտության իրականացման հիմնական նպատակը, ինչպես արդեն նշվել է վերևում, նոր հետազոտության և դիտանցման իրականացումն է հիշատակված շուկաներում, և եթե արդյունքում ի հայտ կգար փաստարկված տեղեկատվություն, որը կվերաարձանագրեր այն հանգամանքը, որ այդ շուկաներում գերիշխող ընկերությունները կամ խոշոր ընկերությունների խումբը դրսևորում են մրցակցությունը սահմանափակող վարքագիծ (պայմանագրի հետ չկապված դրույթների պարտադրանք, քանակի սահմանափակում և վարքագծային նմանատիպ այլ դրսևորումներ), կատարել համապատասխան առաջարկներ:

Երևանում հարցման մասնակից՝

- ա) A դասի 6 խանութների բոլորի ներկայացուցիչները «ոչ» են պատասխանել այն հարցին, թե վերոհիշյալ չորս ապրանքային շուկաներում մատակարարների կողմից իրենց առաջարկվող պայմանագրերում գետեղված են արդյոք պարտադրանք պարունակող կետեր,
- բ) B դասի 23 խանութների ներկայացուցիչներից վերոհիշյալ հարցին «այո» են պատասխանել համապատասխանաբար 3 խանութ «Պաղպաղակ» ապրանքային շուկայի մասին և 4 խանութ՝ «Չովացուցիչ ջրեր»-ի շուկայի մասին,
- գ) C դասի 33 խանութների ներկայացուցիչներից հարցին «այո» է պատասխանել ընդամենը 1 խանութ «Չովացուցիչ ջրեր» ապրանքային շուկայի մասին:

Այսպիսով, Երևան քաղաքի թվով 62 խանութների ներկայացուցիչներից ոչ մի խանութի պատասխանատու պարտադրանքի կետ չի տեսնում իրեն առաջարկվող պայմանագրերի մեջ «Գ-արեջուր» և «Չու» ապրանքային շուկաներում և շատ փոքրաթիվ խանութներ են նման դրույթներ տեսնում «Պաղպաղակ» և «Չովացուցիչ ջրեր» ապրանքային շուկաներում առաջարկվող պայմանագրերում:

Աղյուսակ 2. Երևանում հարցման մասնակից խանութների թիվը



Հարցաթերթիկի 5-րդ հարցի կապակցությամբ նմանատիպ իրավիճակ է արձանագրվել Գյումրիում, որտեղ հարցման մասնակից՝

- ա) A դասի միակ խանութի ներկայացուցիչը «ոչ» է պատասխանել այն հարցին, թե վերոհիշյալ չորս ապրանքային շուկաներում մատակարարների կողմից իրենց առաջարկվող պայմանագրերում զետեղված են արդյոք պարտադրանք պարունակող կետեր,
- բ) B դասի 10 խանութներից 9-ի ներկայացուցիչները նույնպես «ոչ» են պատասխանել վերոհիշյալ հարցին: Մեկ խանութի ներկայացուցիչ նշել է, որ այդպիսի պարտադրանքի դրույթ իրեն առաջարկվել է «Չովացուցիչ ջրեր» ապրանքային շուկայում,
- գ) C դասի 8 խանութներից միայն մեկի ներկայացուցիչն է «այո» պատասխանել հարցին «Չովացուցիչ ջրեր» ապրանքային շուկայի մասին:

Այսպիսով Գյումրիում A և B և C դասերի խանութների ներկայացուցիչների գերակշիռ մեծամասնությունը՝ 90 և ավելի տոկոսը, արձանագրել են, որ պարտադրանք պարունակող դրույթներ իրենց առաջարկվող պայմանագրերում չեն պարունակվում:

Հարցաթերթիկի 5-րդ հարցի կապակցությամբ արձանագրվել է նմանատիպ իրավիճակ նաև Վանաձորում, որտեղ հարցման մասնակից A դասի երկու և B դասի յոթ և C դասի ինը խանութների ներկայացուցիչներից և ոչ մեկը հարցին դրական չի պատասխանել:

Խանութների ներկայացուցիչների կողմից իրենց առաջարկվող պայմանագրերում պարտադրանքի առկայության մասին դրույթների հիշատակումներն ընդհանուր թվաքանակի մեջ այնքան փոքր տեսակարար կշիռ են կազմում, որ ըստ խանութների դասերի դրանց վերլուծությունն ուղղակի անիմաստ է: Այդ իսկ պատճառով ստորև ցուցանիչները ներկայացվում են ընդհանրական տեսքով:

Այսպես, հատկանշական է, որ Երևանում պարտադրվող դրույթի մասին նշում կատարած խանութների ներկայացուցիչները որպես այդպիսի պարտադրանք նշել են

«Ապրանքները և սառնարանը ցուցադրել ամենատեսանելի վայրում», որը, մեր կարծիքով, հնարավոր պարտադրանքների հիերարխիայում վերջին տեղերից մեկն է գրավում:

Ըստ հարցման ենթարկված խանութների ներկայացուցիչների՝ Գյումրիում պարտադրանք պարունակող մատակարարի առաջարկն այլ ուղղություն ունի՝ «այլ մատակարարից չստանալ և չվաճառել ապրանքներ»:

Ինչ վերաբերում է Վանաձորին, ապա հարցաթերթի պարտադրանքի բնույթը հասկորոշող կետերը չեն լրացվել, քանի որ Վանաձորի բոլոր դասերի 18 խանութների ներկայացուցիչներն էլ միահամուռ արձանագրել էին, որ իրենց մատակարարների կողմից առաջարկվող պայմանագրերում պարտադրանք պարունակող դրույթներ չկան:



Հարցման արդյունքների քննարկում
Դիանա Մինասյան և Դավիթ Հովհաննիսյան

Հետազոտության նպատակի տեսանկյունից հարցաթերթի կարևորագույն հարցերից մեկն է հանդիսանում նվազագույն վաճառքի քանակի հնարավոր սահմանափակման վերաբերյալ հարցը՝ հարց 7-րդ: Խնդիրն արձանագրված է նաև Ծրագրի «Տեխնիկական առաջադրանքի» 3-րդ կետում: Հարկ է նշել, որ տվյալ հարցի դիմաց ստացված պատասխանների ամփոփումն արձանագրում է վերը ներկայացվածի համատեքստին համահունչ իրավիճակ:

Այսպես, «Ձեր հետ կնքված պայմանագրերում առկա՞ է արդյոք պարտադիր նվազագույն վաճառքի քանակը սահմանող դրույթ» հարցին Երևանի հարցման ենթարկված խանութների պատասխանատուները բոլոր չորս ապրաքային շուկաների համար «ոչ» են պատասխանել՝

- ա) A դասի 6 խանութների ներկայացուցիչներից՝ բոլոր 6-ը,
- բ) B դասի 23 խանութների ներկայացուցիչներից՝ 23-ը,
- գ) C դասի 33 խանութների ներկայացուցիչներից՝ 31-ը:

Գյումրիում 7-րդ հարցին բոլոր չորս ապրաքային շուկաների համար «ոչ» են պատասխանել՝

- ա) A դասի միակ խանութի ներկայացուցիչը,
- բ) B դասի 10 խանութների ներկայացուցիչներից 9-ը,
- գ) C դասի 8 խանութների ներկայացուցիչներից 7-ը:

Վանաձորում 7-րդ հարցին «այո» է պատասխանել մեկ խանութի ներկայացուցիչ «Չու» ապրանքային շուկայի համար: Մանացած բոլոր խանութները հետազոտվող բոլոր ապրանքային շուկաների համար պատասխանել են «ոչ», շատ հազվադեպ՝ «դժվարանում են պատասխանել»:

Փաստորեն, ըստ հարցման ենթարկված խանութների ներկայացուցիչների ավելի քան 95 տոկոսի կարծիքի, Երևանում, Գյումրիում և Վանաձորում հետազոտվող չորս ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող կամ խոշոր մատակարարները խանութներին (անկախ դասից) չեն առաջարկում այնպիսի պայմանագրեր, որոնք պարունակում են վաճառքի նվազագույն չափը սահմանող դրույթներ:

Միաժամանակ, Երևանում և Գյումրիում հարցման որոշակի մասնակից խանութների ներկայացուցիչներ բացասական են գնահատել նվազագույն վաճառքի քանակի սահմանափակման հնարավոր դրույթը, համարելով, որ դա «իրենց իրավունքները սահմանափակող պահանջ է»: Երևանում այդպես են մտածում C դասի 23 խանութների ներկայացուցիչներից 7-ը, իսկ Գյումրիում՝ B դասի 10 խանութների ներկայացուցիչներից 6-ը, իսկ C դասի 8 խանութների ներկայացուցիչներից 7-ը:

Հետազոտության և հարցման նպատակի իրագործման տեսանկյունից չափազանց կարևոր հարց է 11-րդ հարցը՝ «Մատակարարի հետ համագործակցության ժամանակ առաջանում են արդյոք պայմանագրով չկարգավորված հարաբերություններ և եթե այո, ապա ինչպիսի՞», որի նպատակն էր պարզաբանել, առկա՞ են արդյոք շուկաների մատակարարների կողմից, այսպես կոչված, «արտապայմանագրային», վարքագծային պարտադրանքի դրսևորումներ: Այս հարցը ծանրակշիռ է մաև նրանով, որ հետազոտություն սկսելու համար հիմք ծառայած «Կոկա-Կոլա»-ի գործը հենց նման բնույթի էր: Առաջարկվող պայմանագրից դուրս մատակարարը հարկադրել էր խանութներին չհամագործակցել մրցակից «Պեպսի-Կոլա»-ի հետ, հակառակ դեպքում սպառնալով ետ վերցնել հատկացված սառնարանները: Գործի հիմքում դրված տեղեկատվությունը բերված էր միայն Երևան քաղաքից (մարզերը չէին ուսումնասիրվել) և սույն հարցման շրջանակներում մարզերից ստացված տեղեկատվությունը կարող է նոր պնդումների հիմք ծառայել:

Գործի ավարտից հետո հարցման արդյունքները ցույց են տալիս հետևյալ պատկերը:

Հարցաթերթիկի վերոհիշյալ 11-րդ հարցին Երևանի հարցման ենթարկված խանութների պատասխանատուները բոլոր չորս ապրանքային շուկաների համար «ոչ» են պատասխանել՝

- ա) A դասի 6 խանութների ներկայացուցիչներից՝ 6-ը,
- բ) B դասի 23 խանութների ներկայացուցիչներից՝ 22-ը,
- գ) C դասի 33 խանութների ներկայացուցիչներից՝ 28-ը:

Երևանում B դասի մեկ խանութի ներկայացուցիչ պնդել է, որ «Ձովացուցիչ ջրեր» ապրանքային շուկայում իրեն բանավոր հարկադրել են չտեղադրել այլ ընկերությունների սառնարաններ: «Գարեջուր» շուկայում C դասի 2 խանութի, «Ձովացուցիչ ջրեր» շուկայում 2 խանութի և «Պաղպաղակ» շուկայում մեկ խանութի ներկայացուցիչներ նշել են, որ իրենց բանավոր հարկադրել են չաշխատել այլ մատակարարների հետ:

Գյումրիում B դասի 2 խանութների ներկայացուցիչներ նշել են, որ «Գարեջուր» ապրանքային շուկայում իրենց բանավոր հարկադրել են չտեղադրել այլ ընկերությունների սառնարաններ, իսկ C դասի 2 խանութի ներկայացուցիչ՝ «իրենց բանավոր հարկադրել են չաշխատել այլ մատակարարների հետ»:

Վանաձորում 11-րդ հարցին «ոչ» են պատասխանել՝

- ա) A դասի 2 խանութների ներկայացուցիչները՝ բոլոր չորս շուկաներում,
- բ) B դասի 7 խանութների ներկայացուցիչներից համապատասխանաբար 7-ը՝ «Գարեջուր» և «Ձու» ապրանքային շուկաներում և 6-ը՝ «Պաղպաղակ» և «Ձովացուցիչ ջրեր» շուկաներում,
- գ) C դասի 9 խանութների ներկայացուցիչներից համապատասխանաբար 8-ը՝ «Գարեջուր» և «Ձու» ապրանքային շուկաներում և 7-ը՝ «Պաղպաղակ» և 6-ը՝ «Ձովացուցիչ ջրեր» շուկաներում:

Այսպիսով, հարցման ենթարկված խանութների ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը նշել է, որ խնդրո առարկա ապրանքային շուկաներում մատակարարների կողմից «արտապայմանագրային» վարքագծային չարաշահումների դեպքեր և գործողություններ չեն արձանագրվել:

Այնուամենայնիվ, ապրանքային շուկաների պարբերական մոնիտորինգների անցկացման ժամանակ նպատակահարմար կլինի ուշադրության կենտրոնում պահել վերը քննարկված վարքագծային պարտադրանքի հնարավոր դրսևորումները՝ հաշվի առնելով նույնիսկ ստացված փոքրաթիվ պատասխանները:

Հետաքրքրական է, որ մարզերում, հատկապես Վանաձորում հարցումն իրականացնողներին որպես բացատրություն նշել են, որ նախկինում նման դեպքերը բազմաթիվ էին, սակայն «Երևանում գործող մրցակցության պաշտպանության հանձնաժողովի համապատասխան որոշումից հետո իրավիճակը հիմնականում շտկվել և ներկայումս մատակարարները նման վարքագիծ չեն դրսևորում»:

Հարցումների արդյունքների ամփոփումից հետո ի հայտ եկան մի շարք հանգամանքներ և արվեցին հետևություններ, որոնք պետք է հետաքրքրեն ոչ այնքան Հանձնաժողովին, որքան երկրի տնտեսական և հարկային քաղաքականությունը մշակող ինստիտուտներին:

Մասնավորապես, հարցաթերթի 13-րդ՝ «Կա՞ն արդյոք խոչընդոտներ Ձեր գործի զարգացման (ընդլայնման) համար» հարցին Երևանի հարցման ենթարկված բոլոր դասերի խանութների մոտ կեսը, իսկ Գյումրիում և, հատկապես, Վանաձորում՝ ճնշող մեծամասնությունը նշել են, որ առկա են խոչընդոտներ և, ըստ հաճախ կրկնվող պատասխանների, դրանք դասակարգվում են հետևյալ կերպ՝

- ա) հարկային դաշտը և օրենսդրությունը, հարկային ծանր բեռը,
- բ) ֆինանսական ռեսուրսների սակավությունը, վարկերի կարճ ժամկետները և բարձր տոկոսները,
- գ) ազգաբնակչության գնողունակության պակասը (փոքրաթիվ սպառումը),
- դ) մատակարարները խախտում են պայմանագրերը
- ե) պետությունը միջամտում և խանգարում է,
- զ) այլ խանութների մրցակցությանը չենք դիմանում և այլն:

Կարծիքների որոշակի տարբերություն և ցրվածություն է գրանցվել հարցաթերթիկի 12-րդ և 15-րդ հարցերի պատասխանների մասով:

Այսպես, 12-րդ հարցի կապակցությամբ, այն է՝ «Բավարարվա՞ծ եք արդյոք մատակարարների հետ համագործակցության որակից» Երևան քաղաքի հարցման ենթարկված A դասի խանութների ներկայացուցիչներից բոլոր չորս ապրանքային շուկաներում «այո» են պատասխանել 6-ը, իսկ «ոչ»՝ 1-ը՝ «Պաղպաղակ» ապրանքային շուկայում:

B դասի խանութներից 22-ը բավարարված են մատակարարների հետ համագործակցության որակից 4 ապրանքային շուկաներում, իսկ 3-ը՝ ոչ, որից 1-ը՝ զարեջուր ապրանքային շուկայում և 2-ը՝ ձու ապրանքային շուկայում:

С դասի խանութների ներկայացուցիչներից նույն հարցին «այո» են պատասխանել հարցման ենթարկվածներից 19-ը բոլոր ապրանքային շուկաներում, «ոչ»՝ 12-ը, որից 5-ը՝ գարեջուր ապրանքային շուկայում, 4-ը՝ ձու ապրանքային շուկայում, 2-ը՝ պաղպաղակ ապրանքային շուկայում և 1-ը՝ զովացուցիչ ըմպելիքներ ապրանքային շուկայում, իսկ 2-ը՝ դժվարացել են պատասխանել:

Գ-յումրի և Վանաձոր քաղաքներում պատկերը հետևյալն է.

Գ-յումրիում մատակարարների հետ համագործակցության որակից գոհ են՝

- ա) հարցման ենթարկված А դասի խանութները բոլոր չորս ապրանքային շուկաներում,
- բ) В դասի խանութներից 9-ը բոլոր չորս ապրանքային շուկաներում, իսկ 1-ը «ոչ»՝ «Գարեջուր» ապրանքային շուկայում,
- գ) С դասի խանութներից հարցման ենթարկված բոլոր 8 խանութները:

Վանաձորում մատակարարների հետ համագործակցության որակից գոհ են՝

- ա) А դասի հարցման ենթարկված 2 խանութները,
- բ) В դասի 7 խանութները՝ 4 ապրանքային շուկաներում,
- գ) С դասի 6 խանութները, իսկ 1-ը դժվարացել է պատասխանել:

Հարցաթերթիկի 15-րդ հարցին՝ «Ձեր գնահատմամբ առկա^o է արդյոք արդար և առողջ մրցակցություն» հարցին¹¹ Երևան քաղաքում պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ՝

- ա) А դասի 6 խանութներից 2-ի գնահատմամբ արդար և առողջ մրցակցություն կա, 3-ի գնահատմամբ՝ չկա, իսկ 1-ը՝ դժվարացել է պատասխանել:
- բ) В դասի հարցման ենթարկված խանութներից 16-ը նույն հարցին պատասխանել են այո, 2-ը՝ ոչ, իսկ 2-ն էլ դժվարացել են պատասխանել:
- գ) С դասի խանութներից 19-ը գտնում են, որ առկա է առողջ և արդար մրցակցություն, 3-ը կարծում է, որ առկա չէ այդպիսի մրցակցություն և 8-ն էլ դժվարացել են պատասխանել:

Համապատասխանաբար Գ-յումրի քաղաքում նույն հարցին այո են պատասխանել.

В դասի խանութներից 8-ը, С դասի խանութներից 5-ը:

Ոչ են պատասխանել.

¹¹ Աշխատանքային խմբի կարծիքով, հարցման մասնակից խանութների ներկայացուցիչները բավականին դրական են պատասխանել տվյալ հարցին, քանի որ իրենց գործը զարգացնելուն խոչընդոտող գործոնների շարքում «մրցակցությանը չենք դիմանում» պատասխանը շատ քիչ են նշել: Հարցման նպատակների տեսանկյունից խնդիր չի դրվել պարզաբանել հարցին «այո» կամ «ոչ» պատասխանելու խանութների ներկայացուցիչների շարժառիթները: Դրանք կարող էին որոշակիորեն մասնակիցներին պատասխանի լրացման ընթացքում շեղել հիմնական նպատակից: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր մասնակից հարցին պատասխանել է՝ ելնելով իր գիտելիքների և օրենսդրության դրույթների իմացության պաշարից և «մրցակցության» ընկալման իր տեսանկյունից: Այնուամենայնիվ, հետագա գործընթացների կազմակերպման ժամանակ նպատակահարմար կլինի պարզաբանել այդ շարժառիթները:

Հարցման ենթարկված A դասի խանութները, B դասի խանութներից 2-ը և C դասի խանութներից 3-ը:

Վանաձորում հարցման ենթարկված խանութների ճնշող մեծամասնությունը կարծում է, որ կա առողջ և արդար մրցակցություն:

3.4 Եզրակացություններ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Ծրագիրն իրագործող աշխատանքային խմբի տրամադրության տակ չկան բավարար փաստարկված հիմքեր առ այն, որ «Ձուվացուցիչ ջրեր» և դիտարկված երեք այլ ապրանքային շուկաներում մատակարարների և խանութների համագործակցության մեջ առկա են մրցակցային օրենքի տեսանկյունից խախտում դիտարկվող պայմանագրերով նախատեսված և, այսպես կոչված, «արտապայմանագրային» պարտադրանքի դրույթներ կամ վարքագիծ: Ուստի, հիմք ընդունելով հետազոտության ներկայացված արդյունքները, Ծրագիրը Հանձնաժողովին չի առաջարկի վերոհիշյալ հիմքերով վարույթներ նախատեսել:

Միաժամանակ, հետազոտության ժամանակ ի հայտ եկած այլ հանգամանքների վերաբերյալ Ծրագիրը կտեղեկացնի պատկան ատյաններին:

Ներկայացված իրավիճակը Ծրագիրը գնահատում է որպես որոշակի առաջընթաց Հայաստանի Հանրապետության բաշխման համակարգում 2005 թվականի համեմատությամբ: Ինչ վերաբերում է նման առաջընթացին նպաստող հանգամանքներին, ապա աշխատանքային խմբի համոզմամբ, դրանց շարքին կարելի է դասել՝

- ա) ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հիշատակված որոշումը և դրան հաջորդած լուսաբանումն ու քննարկումները, թափանցիկ գործելաճը:
- բ) Եվրոպական Հանձնաժողովի Մրցակցության Գլխավոր Տնօրինության որոշումը, որով «Կոկա-Կոլա» ընկերության նկատմամբ սահմանվել են հակամրցակցային հնարավոր վարքագիծը սահմանափակող շատ արմատական դրույթներ (http://ec.europa.eu/dgs/competition/index_en.htm):

Մրցակցության հիմնախնդիրների աստիճանական տարածումը բիզնես հանրության շրջանում և այլն:

4. Խանութների «ճնշումը» մատակարարների նկատմամբ

4.1. Նախադրյալները

Ինչպես արդեն նշվել է վերևում, Ծրագրի «Տեխնիկական առաջադրանքի» համաձայն, կարևորվում է գիտելիքների պաշարի ավելացման և ճանաչողության բարձրացման խնդիրը բաշխման համակարգի միջազգայնորեն հայտնի ու կիրառվող ուղղությունների առնչությամբ, որոնք տարբեր, մասնավորապես զարգացող երկրներում բաշխման համակարգի ոչ զարգացած լինելու պատճառով դեռևս չեն կիրառվում կամ չեն հանդիպում: Այդ առումով, նաև Հայաստանում դրանց շարքին են դասվում մանրածախ վաճառողների կողմից ձեռնարկվող որոշակի գործողությունները, մասնավորապես, **վաճառքի հնարավորության մերժումը** - երբ մանրածախ վաճառողները մերժում են արտադրողների կամ մեծածախ վաճառողների մուտքն իրենց խանութներ և **«գովազդված լինելու նվազագույն պահանջի թելադրումը»** - երբ մանրածախ վաճառողները հրաժարվում են վաճառքի ընդունել այն ապրանքները, որոնք բավարար չափով գովազդված և հայտնի չեն սպառողներին:

Աշխատանքային խումբը խորհրդատվություններից հետո նպատակահարմար է համարել վերոհիշյալ խնդրի իրագործումն ապահովել հարցումների կազմակերպման ճանապարհով: Իրականացվել են էլեկտրոնային եղանակով հարցումներ նախապես մշակված հարցաթերթիկի¹² կիրառմամբ, որի մեջ բացի վերոհիշյալ հարցերից, ընդգրկվել են նաև հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Տնտեսվարող սուբյեկտների հարցումներն իրականացվել են Ծրագրի համակողմ Ռուս-Հայկական՝ (Սլավոնական) պետական համալսարանի ներգրավված ուսանողների կողմից էլեկտրոնային փոստի միջոցով՝ նախապես համաձայնեցված և սահմանված ընթացակարգով:

Հարցման տվյալների ճշգրտման և հավաքագրման համար հիմք են հանդիսացել 1997-2007 «Սփյուռ տեղեկատվական կենտրոն»-ից քաղված նյութերը, տնտեսվարող սուբյեկտների հետ անմիջական շփումները, « www.google.am » ինտերնետային կայքը:

Վերը նշված տվյալների հիման վրա կատարված աշխատանքների արդյունքում կազմվել է «Ալյուր», «Ադ-կերակրի», «Պահածոներ», «Մսամթերք», «Կիսաֆաբրիկատներ», «Գարեջուր», «Գինի», «Կաթնամթերք», «Պանիր», «Պաղպաղակ», «Ծխախոտ», «Շոկոլադե կոնֆետ», «Հրուշակեղեն», «Հաց», «Հյութ», «Բուսական յուղ», «Մակարոնեղեն», «Մուրաբա», «Շաքարավազ», «Ջուր՝ աղբյուրի», «Ջուր՝ հանքային, բուժական, սեղանի», «Սուրճ», «Օղի», «Ոչ ոգելից ըմպելիքներ», «Թեյ», «Չավարեղեն», «Ոգելից ըմպելիքներ» և «Դեղամիջոցներ և բժշկական նշանակության առարկաներ» շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների հասցեագրային տեղեկատվական ցանկը:

Հարցումների իրականացման համար սահմանվել է 136 հարցվողների շրջանակ, որոնց գործունեությունը ներառել է վերը նշված 31 ապրանքային շուկաները:

Համաձայն իրականացված հարցման՝ 136 հարցվող ընկերություններից 30-ը ընդհանրապես չունենին էլեկտրոնային փոստ, ինչը, բնականաբար, խոչընդոտել է էլեկտրոնային փոստի միջոցով հարցման համալիր և լիակատար իրականացմանը: Այդ պատճառով հարցումը անց է կացվել նաև հաղորդակցման այլ միջոցներով (ֆաքս, զանգ, անձնական այցելություն):

Անմիջական շփման ժամանակ բացահայտվել է, որ հարցմանը մասնակից տնտեսվարող սուբյեկտներից 35-ը ցանկալի են համարել հարցումներ իրականացնողի

¹² Հավելված 6

անմիջական ներկայանալը՝ ֆիզիկական պաշտոնական փաստաթղթի տրամադրմամբ, ուստի՝ հարցման էլեկտրոնային եղանակին չեն մասնակցել:

Հարցման իրականացման ընթացքում բացահայտվել է, որ մի շարք օբյեկտիվ պատճառներով 25 ընկերություն չեն ստացել հարցաթերթիկները՝ հանրապետությունում գործող ինտերնետ ծառայությունների ցածր որակի հետևանքով:

Տասներեք ընկերություններ շուրջ 6 և ավելի անգամներ կատարված հեռախոսազանգերից և խնդրի առավել մանրամասն ներկայացումից հետո չեն հրաժարվել համագործակցել, սակայն այդպես էլ պատասխաններ չեն ուղարկել:

Տասնչորս ընկերություններ ուղղակի անարձագանք են թողել հարցաթերթիկը:

Հարցման ենթարկված 136 սուբյեկտներից 13-ը հրաժարվել են պատասխանել:

Վերը նշված ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտներից հարցաթերթիկներին պատասխանել է միայն 6 ընկերություն՝ «Գ-ինի», «Կաթնամթերք», «Պանիր», «Մամթերք», «Պահածոներ», «Մուրաբա» ապրանքային շուկաներից: Տվյալ վեց ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների հարցաթերթիկների օրինակները բերված են Հավելված 7-ում :

4.2 Հարցման արդյունքները

Հարցման նպատակից ելնելով առաջնահերթորեն պարզաբանվել են վաճառքի մերժմանը և բավարար գովազդված լինելու հանգամանքին վերաբերող հարցերի պատասխանները:

Այսպես, «Մերժե՞լ են արդյոք խանութները վաճառել Ձեր կազմակերպության կողմից առաջարկվող ապրանքը» հարցին հարցմանը մասնակից վեց կազմակերպություններից երեքը «Մուրաբա», «Գ-ինի» և «Պահածոներ» ապրանքային շուկաներում նշել են, որ եղել են դեպքեր, երբ սպառող ընկերությունները մերժել են իրենց ապրանքը վաճառքի դնելու առաջարկը:

Որպես ապրանքի վաճառքը մերժելու պատճառաբանություն սպառող ընկերությունները նշել են հետևյալները՝ վաճառարահների (համաձայն հարցվողի պահանջի՝ 18 մ²-ից ոչ պակաս) և ցուցադարակների անբավարարություն կամ բացակայություն, առաջարկվող ապրանքի թանկություն:

Բավարար չափով գովազդված չլինելու պատճառով ապրանքների վաճառքը մերժելու վերաբերյալ հարցին հարցմանը մասնակից վեց կազմակերպություններից բոլորը բացասական են պատասխանել:

Միաժամանակ, ելնելով պատեհ առիթից, աշխատանքային խումբը հարցաթերթում տեղադրել է նաև բաշխման համակարգին վերաբերող այլ հարցեր, որոնց պատասխանները բերվում են ստորև:

Հարցաթերթիկի 4-րդ հարցին՝ «Կա՞ն արդյոք մատակարարվող ապրանքի քանակական սահմանափակումներ» հարցին ոչ են պատասխանել վեց տնտեսվարող սուբյեկտներ բոլոր վեց ապրանքային շուկաներում:

«Ապրանքը խանութներին մատակարարելիս արդյոք հաշվի՞ են առնվում խանութի տարածքի չափը» հարցին այո են պատասխանել երեք տնտեսվարող սուբյեկտներ՝ «Մուրաբա», «Կաթնամթերք», «Պահածոներ» ապրանքային շուկաներում, իսկ ոչ՝ երեք տնտեսվարող սուբյեկտներ՝ «Մամթերք», «Գ-ինի» և «Պանիր» ապրանքային շուկաներում:

Հարցմանը մասնակից կազմակերպություններից չորսը չի ցանկացել համագործակցել որոշ սպառող ընկերությունների հետ, վերջիններիս վարկանիշի, բիզնես-վստահության, վճարունակության, պարտաճանաչության բացակայության և վարկաբեկվածության պատճառով:

«Ինչպիսի՞ն է ընկերության արտադրանքի բաշխման համակարգը» հարցին մեկ տնտեսվարող սուբյեկտ «Մսամթերք» ապրանքային շուկայում բաշխումն իրականացնում է սեփական խանութների ցանցի միջոցով՝ միասնական հաշվապահությամբ, առանձնացված հաշվապահությամբ, միջնորդ կազմակերպություն-խանութ՝ պայմանագրերի հիման վրա, ինչպես նաև սեփական պահեստից: Երկու տնտեսվարող սուբյեկտներ «Մուրաբա» և «Պահածոներ» ապրանքային շուկաներում բաշխումն իրականացնում են սեփական խանութների ցանցի միջոցով՝ միասնական հաշվապահությամբ, միջնորդ կազմակերպություն-առաքիչներ՝ պայմանագրերի հիման վրա, միջնորդ կազմակերպություն-խանութ՝ պայմանագրերի հիման վրա, ինչպես նաև սեփական պահեստից: Մեկ տնտեսվարող սուբյեկտ «Գինի» ապրանքային շուկայում բաշխումն իրականացնում է սեփական պահեստից: Մեկ տնտեսվարող սուբյեկտ «Պանիր» ապրանքային շուկայում բաշխումն իրականացնում է և միջնորդ կազմակերպություն-խանութ՝ պայմանագրերի հիման վրա և սեփական պահեստից:

Մեկ տնտեսվարող սուբյեկտ «Մսամթերք» ապրանքային շուկայում ապրանքը սպառող կազմակերպությանը տալիս է պայմանագրի միջոցով, վեց տնտեսվարող սուբյեկտ բոլոր վեց ապրանքային շուկաներում՝ հաշիվ ապրանքագրի միջոցով:

Հինգ տնտեսվարող սուբյեկտներ «Մսամթերք», «Մուրաբա», «Գինի», «Կաթնամթերք», «Պահածոներ» ապրանքային շուկաներում վճարումն իրականացնում են կանխիկ, չորս տնտեսվարող սուբյեկտ «Մսամթերք», «Մուրաբա», «Գինի», «Պահածոներ» ապրանքային շուկաներում՝ անկանխիկ՝ փոխանցումով, երկու տնտեսվարող սուբյեկտներ «Մուրաբա» և «Պահածոներ» ապրանքային շուկաներում՝ մինչև ապրանքի վաճառելը և վեց տնտեսվարող սուբյեկտներ բոլոր վեց ապրանքային շուկաներում՝ ապրանքի վաճառքից հետո:

Մեկ տնտեսվարող սուբյեկտ «Պանիր» ապրանքային շուկայում նշել է, որ մատակարարումն իրականացվում է բանավոր համաձայնությամբ, իսկ հինգ տնտեսվարող սուբյեկտները մնացած հինգ ապրանքային շուկաներում՝ ամեն օր:

Բոլոր վեց տնտեսվարող սուբյեկտները չունեն ապրանքի մատակարարման սահմանափակումներ և չվաճառված ապրանքը ետ են վերցնում պահպանման ժամկետը լրանալու դեպքում:

Սպառող ընկերությանը սառնարաններ, ցուցադրման կամ պահպանման այլ միջոցներ տրամադրում են հարցվողներից չորսը «Մսամթերք», «Մուրաբա», «Կաթնամթերք», «Պահածոներ» ապրանքային շուկաներում, ընդ որում՝ այդ կազմակերպություններից երեքը պահանջում են այլ ապրանք չտեղադրել իրենց ապրանքի կողքին, իսկ մեկը՝ այլ ապրանք չտեղադրել սարքի մեջ:

Հինգ տնտեսվարող սուբյեկտներ «Մսամթերք», «Մուրաբա», «Գինի», «Պահածոներ», «Պանիր» ապրանքային շուկաներում նշել են, որ իրենց կողմից կիրառվում են գեղչեր:

Տնտեսվարող սուբյեկտներից հինգը «Մսամթերք», «Մուրաբա», «Կաթնամթերք», «Պահածոներ», «Պանիր» ապրանքային շուկաներում ծանոթ են իրենց մրցակիցների բաշխման համակարգերին, որոնցից երկուսը «Պանիր» և «Կաթնամթերք» ապրանքային շուկաներում համաձայնեցնում են միմյանց հետ իրենց բաշխման քաղաքականությունները:

«Կա՞ն արդյոք սպառող ընկերություններ, որոնց հետ չեք ցանկանում համագործակցել» հարցին այո են պատասխանել հինգ տնտեսվարող սուբյեկտներ «Մսամթերք», «Մուրաբա», «Գինի», «Պահածոներ», «Պանիր» ապրանքային շուկաներում:

4.3 Եզրակացություններ

Այսպիսով, չնայած հարցմանը պատասխանողների թիվը սպասվածից բավականին փոքր է, այնուամենայնիվ, հարցման արդյունքներից ի հայտ են եկել մի քանի կարևոր եզրակացություններ:

- Որոշակիորեն պարզաբանվում է, որ ոչ թե արտադրող (կամ ներկրող) ընկերություններն են թելադրում իրենց պայմանները, այլ ապրանքի քանակական սահմանափակման բացակայության, ժամկետանց ապրանքները ետ վերցնելու, գեղչերի կիրառման պայմաններում, կան դեպքեր, երբ խանութները մերժում են նրանց ապրանքը վաճառել իրենց մոտ՝ ապրանքը ցուցադրելու հնարավորության ու համապատասխան տարածքի բացակայության, երբեմն նաև թանկության և այլ պատճառներով:

- Ապրանքները բավարար չափով գովազդված չլինելու հանգամանքը էական նշանակություն չունի վաճառողների համար և այդ հիմքով խանութները չեն մերժել վաճառել արտադրողների (ներկրողների) առաջարկվող ապրանքները:
- Կան դեպքեր, երբ արտադրող (ներկրող) ընկերություններն իրենք չեն ցանկանում համագործակցել որոշ խանութների հետ նրանց կողմից ոչ բավարար մակարդակի բիզնես վարելու պատճառով:
- Հիմնականում ընկերությունները տեղյակ են իրենց մրցակիցների բաշխման համակարգերին և, որոշ դեպքերում, անգամ համաձայնեցնում են իրենց բաշխման քաղաքականությունը:
- Հիմնականում Երևան քաղաքի մանրածախ առևտրի համակարգում սկիզբ է առել մի գործընթաց, երբ ձևավորված «էլիտար» մի շարք խանութների ցանցեր ապրանքներն առաջարկողներին թելադրում են որոշակի պայմաններ և մանրածախ սպառման մնացած համակարգի համար «զնազոյացնող» դեր են կատարում:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև հարցման արդյունքում ի հայտ եկած իրավիճակին՝ հարցման իրականացման մթնոլորտին: Հարցման արդյունքների «տեխնիկական» մասը կիրառական նշանակություն կարող է ունենալ Հանձնաժողովի աշխատակազմի համար, քանի որ էլեկտրոնային հաղորդակցության ուղիների զարգացմանը զուգահեռ նպատակահարմար կլինի վարույթներն իրականացնելու ժամանակ սուբյեկտներից էլեկտրոնային եղանակով ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Վերոհիշյալի համատեքստում եզրակացությունն այն է, որ արդյունքները հուսադրող չեն հարցումների իրականացման ժամանակ տիրող մթնոլորտի, սուբյեկտների պատրաստակամության, վայելչության և պարզապես բիզնես-կուլտուրայի տեսանկյունից:

Հարցման ենթակա տնտեսվարող սուբյեկտները հիմնականում ցուցաբերում էին անտարբերություն, թերահավատություն և անվստահություն: Հարցմանը լուրջ վերաբերմունքի բացակայության հիմքերից մեկն է հանդիսանում ընկերությունների էլեկտրոնային փոստի հասցեների վրա մեծաքանակ տարաբնույթ հարցաթերթիկների ստացման փաստը: Ընկերություններից շատերը չեն վստահում հարցում իրականացնողներին և շատ անգամ վերջիններից ակնկալվող արդյունքները չեն արդարացվում: Պատճառն այն է, որ նման հարցումներ շատ են կատարվում և, ըստ նրանց, այդ հարցումները և դրանց հիման վրա կատարվող հետևությունները որևէ էական նշանակություն չեն ունենում բիզնես միջավայրի իրական բարելավման գործում, ուստի դա նրանց տեսակետից ավելորդ ժամանակի և միջոցների վատնում է:

5. Մրցակցության խնդիրները բաշխման համակարգում

5.1 Նախադրյալներ

Ինչպես պարզ է դառնում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերի և այլ հրապարակային փաստաթղթերի ուսումնասիրությունից, Հանձնաժողովի կողմից որոշակի ապրանքային և ծառայությունների շուկաներ նպատակային կերպով դիտարկվել են պարզաբանելու համար բաշխման համակարգում մրցակցության պաշտպանության տեսանկյունից առկա խնդիրները: Տվյալ համատեքստում սկսած 2006 թվականի վերջից, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ապրանքների շրջանառության ոլորտում՝ գարեջրի, ցեմենտի, գաջի, հավի ձվի, շաքարավազի, կարագի, բուսական յուղի, մսամթերքի, բենզինի, դիզելային վառելիքի և այլ ապրանքային շուկաները և ծառայությունների ոլորտում՝ հեռահաղորդակցության (ինտերնետի) շուկան, ինչպես նաև բաշխման համակարգին առնչվող կոնկրետ գործ:

5.2 Մրցակցության պաշտպանության տեսանկյունից բաշխման համակարգում դրսևորվող հիմնական խնդիրները

Իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում բաշխման համակարգի առնչությամբ ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, հատկապես մրցակցային օրենսդրության դրույթները կիրարկելու տեսանկյունից: Մասնավորապես.

- որոշ ապրանքային շուկաներում խոշոր ապրանքարտադրողների կողմից նպատակային կերպով կառուցված ոչ թափանցիկ բաշխման համակարգերի հետևանքով ապրանքները վերջնական սպառողին են հասնում բավականին բարձրացված գներով,
- Հանձնաժողովի աշխատակազմի համար ապրանքային շուկաների կառուցվածքների ուսումնասիրությունների ժամանակ առաջանում են խնդիրներ տվյալ շուկաների ապրանքատեսակային սահմանների և հատկապես, մեծածախ և մանրածախ շուկաների հատկորոշման և ճանաչման գործընթացում՝ ուսումնասիրվող շուկաներում բաշխման համակարգերի անկատարության կամ բացակայության հետևանքով,
- խնդիրներ են առաջանում նաև շուկաների մասնակիցներին պարզաբանելիս. վարչական վարույթներում կամ գերիշխող դիրք ունեցող ընկերություններին որոշելիս, թե ով է հանդիսանում շուկայի դերակատարը՝ արտադրող կամ ներկրող ընկերությունը, թե դրանց ներկակացուցիչը:

5.3 Հայրենական ընկերությունների բաշխման համակարգերի առանձնահատկությունները

Հայրենական ընկերությունների բաշխման համակարգերում նկատվող իրավիճակը լավագույնս նկարագրում են Հանձնաժողովի կողմից հրապարակված փաստաթղթերը¹³:

Այսպես, Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել գերիշխող դիրքի առկայությամբ մի շարք ապրանքային շուկաներում: Ուշադրությունը դարձվել է գերիշխող և խոշոր ընկերությունների գնային քաղաքականությանը (վարքագծին) և այդ ընկերությունների բաշխման համակարգերին: Ուսումնասիրվել են գարեջուր, հավի ձու, մսամթերք, բենզին և դիզելային վառելիք, ապակի, ցեմենտ, գաջ, ամրան, ամրալար, շաքարավազ, կարագ և բուսական յուղ ապրանքային շուկաները:

¹³ Տես Հանձնաժողովի ինտեռնային կայքը՝ www.competition.am:

«Գարեջուր» ապրանքային շուկայի հիմնական ծավալն ապահովվում է երկու խոշոր արտադրող ընկերությունների՝ «Երևանի գարեջուր» ՓԲԸ և «Կոտայք» գարեջրի գործարան ՍՊԸ-ի կողմից, որոնցից մեկն իր գործունեությունն իրականացնում է Երևանում, մյուսը՝ մայրաքաղաքին մոտ գտնվող Կոտայի մարզում: Հարկ է նշել, որ վերջին շրջանում շուկայի խոշոր մասնակից դառնալու լուրջ հավակնորդ է դարձել «Շիրակ» Գյումրու գարեջրի-ածիկի գործարան» ՓԲԸ-ն, որը գտնվում է երկրի երկրորդ խոշոր քաղաքում (Երևանից 122 կմ հեռավորությամբ): Շուկայում կա նաև ներկրվող գարեջուր, որի ծավալները վերջերս ևս աճում են:

Շուկայի խոշոր արտադրողների գների կառուցվածքների ուսումնասիրություններից պարզվել է, որ այդ գները հիմնավոր են և գնային քաղաքականության մեջ համաձայնեցված վարքագիծ չի նկատվել: Սակայն, բաշխման համակարգում նկատվել է նմանատիպ քաղաքականություն և վերջնական սպառողին իրացվող գարեջրի գնի աճ:

Շուկայի երկու խոշոր մասնակից գերիշխող ընկերությունների բաշխման համակարգում վարած քաղաքականության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընկերությունների բաշխման համակարգը չի նախատեսում անմիջական առևտրի օբյեկտին մատակարարում, նրանք իրենց արտադրանքը իրացնում են մեծածախ-միջնորդ ընկերությունների (համագործակցությունը պայմանագրային է), որոնք արտադրանքը հասցնում են առևտրի օբյեկտներ: «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ն ունի նաև ֆիրմային խանութ, որը գտնվում է Երևանի ծայրամասերում և մատչելի է միայն երևանաբնակ, այն էլ ծայրամասի, սպառողներին:

«Կոտայք» գարեջրի գործարան ՍՊԸ-ն իրականացնում է գարեջրի անուղղակի դիստրիբուցիա շուրջ 62 անհատ միջնորդների միջոցով, որոնք իրենց հերթին իրականացնում են վաճառք մանրածախ, մեծածախ վաճառքի կետերին և այլ հանրային օբյեկտներին: Միջնորդները հանդիսանում են առանձին տնտեսվարող սուբյեկտներ: Դրանք հիմնականում անհատ ձեռնարկատերեր են իրենց սեփական մեքենաներով: Նրանք շաղցված գարեջուրը ստանում են գործարանից, դրա դիմաց հանձնելով համապատասխան քանակի տարա, կամ տարայի արժեքը և հասցնում են արտադրանքը առևտրի օբյեկտներ: Այսինքն, գարեջուր արտադրողները չունեն բաշխման սեփական ցանց: Սակայն կասկածներ կան, որ միջնորդ վարորդ-առաքիչները սերտորեն կապված են արտադրողի հետ: Ուսումնասիրության արդյունքներից պարզվել է, որ գարեջրի գները առևտրի օբյեկտներում զգալիորոն բարձր են բացթողման գնից և ֆիրմային խանութում վաճառվող գարեջրի գնից, այսինքն գարեջրի բաշխման և իրացման համակարգում տեղի է ունենում վերջնական սպառողին իրացվող գարեջրի գնի աճ, ինչը պայմանավորված է առկա բաշխման համակարգի առանձնահատկություններով: Հնարավոր է, որ առաջացած տարբերությունը որպես թաքնված օգուտ բաշխվում է արտադրողի, միջնորդի և առևտրի օբյեկտի միջև կամ յուրացվում է դրանցից որևէ մեկի կողմից: Դրա մասին անուղղակիորեն վկայում են նաև Հանձնաժողովի մոնիտորինգի արդյունքների, արտադրողների, առևտրի օբյեկտների ներկայացրած տվյալների միջև հակասություններն ու անհամապատասխանությունները: Հաշվի առնելով շուկայի հիշատակված նոր մասնակիցների մուտքը, նախապատվելի կլինի կրկին ուսումնասիրություններ կատարել այս ապրանքային շուկայում և հնարավոր է, որ նշված փաստի հետևանքով շուկայի պատկերը և բաշխման համակարգը փոփոխված լինեն:

«Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում գործող երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտները՝ «Լուսակերտի տոհմային թռչնաֆաբրիկա» ՍՊԸ (գերիշխող), «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ և «Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ իրենց համաձայնեցված գործողություններով (վարքագծով) «Հավի ձու կճեպով» ապրանքային

շուկայում 2006 թվականի դեկտեմբերին արհեստականորեն բարձրացրել էին հավի ձվի գները¹⁴:

Նշված ապրանքային շուկայում արձանագրվել է նաև մեկ այլ կարևոր երևույթ, հատկապես բաշխման համակարգի խնդիրների տեսանկյունից: Երևան քաղաքում խանութների կողմից ներկայացված տեղեկատվությունը երեք խոշոր ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության հետ համեմատելիս վերջիններիս կողմից արտադրվող և իրացվող հավի ձվի 1 հատի իրացման գինը և խանութների ձեռքբերման գները տարբերվում են, մինչև 24 դրամի¹⁵ չափով, այնինչ, այդ գները պետք է համընկնեին կամ դրանց միջև տարբերությունը պետք է փոքր լիներ, քանի որ բացակայում է միջնորդ օղակը¹⁶: Հավի ձու արտադրող երեք ընկերություններն էլ իրենց արտադրանքն իրացնում են սեփական բաշխման ցանցի՝ ընկերության աշխատակից հանդիսացող վարորդ-առաքիչների միջոցով, որոնք էլ արտադրանքը հասցնում են առևտրի օբյեկտներին: Նրանցից միայն մեկն է, որ ունի իր ֆիրմային խանութը, սակայն այն աշխարհագրական տեսանկյունից տնտեսապես գրեթե մատչելի չէ: Նշվածը կարող է վկայել կողմերից (ապրանք արտադրող ընկերություններ և խանութներ) որևէ մեկի կամ երկուսի կողմից համապատասխանաբար բացթողնման և ձեռքբերման գների միջև առկա տարբերության՝ որպես լրացուցիչ շահույթի ստացման մասին: Երեք խոշոր ընկերությունների կողմից վարվող քաղաքականությունն ապրանքի բաշխման համակարգում համընկնում է:

Ուսումնասիրված ոլորտներից գրեթե յուրաքանչյուրին բնորոշ է այն, որ որևէ կոնկրետ ոլորտում գործող ընկերությունների (հիմնականում՝ տեղական) ապրանքների իրացման կամ ծառայությունների մատուցման եղանակները նույնն են: Գարեջուր արտադրող երկու խոշոր ընկերություններն էլ իրենց արտադրանքը իրացնում են մեծածախ-միջնորդ ընկերությունների, որոնք արտադրանքը հասցնում են առևտրի օբյեկտներ: Այսինքն, գարեջուր արտադրողները չունեն բաշխման սեփական ցանց: Ի տարբերություն նշվածի, հավի ձու արտադրող երեք խոշոր ընկերություններն իրենց արտադրանքն իրացնում են սեփական բաշխման ցանցի՝ ընկերության աշխատակից հանդիսացող վարորդ-առաքիչների միջոցով: Նշված երկու դեպքերում էլ որոշ ընկերություններ ունեն իրենց սեփական ֆիրմային խանութները, որտեղ ապրանքն իրացվում է բավականին ցածր գներով: Թե առաջին և թե երկրորդ դեպքում նկատվում է վերջնական սպառողին իրացվող ապրանքի գնի աճ:

Բաշխման համակարգում գների աճ է նկատվում նաև ցեմենտի և գաջի ոլորտներում: Այս երկու շուկաներում էլ կան երկուական խոշոր արտադրող ընկերություններ (ցեմենտ՝ «Արարատցեմենտ» ՓԲԸ և «Միկա ցեմենտ» ՓԲԸ, գաջ՝ «Գ-աջ» ՓԲԸ և «Գաջեգործ» ՓԲԸ), իսկ ներկրումը գրեթե բացակայում է, կա ցեմենտի մեծ ծավալների արտահանում: Հանձնաժողովի կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքների համաձայն՝ գաջը Երևան քաղաքի տարբեր վայրերում իրացվել է մեկ տոննան՝ 35500 դրամով: Իսկ «Գ-աջ»

¹⁴ Նշված ընկերություններն այլ հավասար պայմաններում ստացել են ավելի մեծ շահույթ, միևնույն ժամանակ ընկերությունների ապրանքի արտադրության ծավալները գերազանցել են իրացման ծավալները, իսկ ընկերություններն իրենց արտադրանքը չեն արտահանել, այսինքն, իրացվող արտադրանքի ծավալը ընկերությունների կողմից սահմանափակվել է: Միևնույն ժամանակ, ընկերություններից յուրաքանչյուրը հավասարաչափ՝ մոտավորապես 20 դրամի չափով, բարձրացրել են իրենց ապրանքի բացթողնման գները և սա այն դեպքում, երբ պետությունը հարկային արտոնություններ է սահմանել ձու արտադրող տնտեսվարող սուբյեկտների համար (վերջիններս ազատված են շահութահարկից և ավելացված արժեքի հարկից): Այսինքն, նրանց համաձայնեցված գործողությունները 2006 թվականի դեկտեմբեր ամսին հանգեցրել են «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում այդ ընկերությունների միջև մրցակցության սահմանափակման և համաձայնության մասնակիցներից յուրաքանչյուրը հնարավորություն է ձեռք բերել ազդել տվյալ ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա (շրջանառության ծավալներ, տեսականի, գին եւ այլն): Հանձնաժողովի կողմից այս շուկայի խոշոր ընկերությունների վարքագիծը որակվել է որպես հակամրցակցային համաձայնություն, որի համար ընկերությունների նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 2006 թվականին հավի ձու՝ կճեպով ապրանքատեսակի իրացումից ընկերություններից յուրաքանչյուրի կողմից ստացված հասույթի մեկ տոկոսի չափով:

¹⁵ Համաձայն Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի 2007 թվականի նոյեմբերի 29-ի տարադրամի փոխարժեքի՝ 1 ԱՄՆ դոլարը համարժեք է 304,54 դրամի:

¹⁶ Բաշխման համակարգի կազմակերպման տվյալ մոդելի, համաձայն արժեքի ավելացում պետք է տեղի չունենար, քանի որ առաքող մեքենաները հանդիսանում են ընկերության սեփականությունը և վարորդ-առաքիչներն էլ ընկերության հաստիքային աշխատակիցներ են, այլ ոչ թե ապրանքներն արտադրողից խանութներ հասցնող բիզնես գործունեությամբ զբաղվող առանձին տնտեսվարող սուբյեկտներ:

ապրանքային շուկայում գործող երկու տնտեսվարող սուբյեկտների տվյալներով, նրանց կողմից գաջի բացթողման (իրացման) գինը տատանվել է մեկ տոննայի համար 26300-27600 դրամի սահմաններում: Այսինքն, շուկայում միջնորդ օդակի առկայության պայմաններում գաջի իրացման գները աճել են: Մոնիտորինգի արդյունքների համաձայն՝ ցեմենտը Երևան քաղաքի տարբեր վայրերում իրացվել է մեկ տոննան՝ 42000 դրամով: Իսկ «Ցեմենտ» ապրանքային շուկայում գործող երկու տնտեսվարող սուբյեկտների տվյալների համաձայն, այդ ամիսներին նրանց կողմից ցեմենտի բացթողման (իրացման) գինը տատանվել է մեկ տոննայի համար 28300-30688 դրամի սահմաններում: Այսինքն, շուկայում միջնորդ օդակի առկայության պայմաններում ցեմենտի իրացման գները ևս աճել են: Ցեմենտի շուկայի բաշխման համակարգի համար հատկանշականն այն է, որ ապրանքի բաշխմանը մասնակցում են կազմակերպա-իրավական որևէ բացահայտված տեսակ չունեցող միջնորդներ: Ցեմենտի բաշխման համակարգը բավարար չափով թափանցիկ չէ:

Այս դեպքերում ցեմենտ և գաջ արտադրող ընկերություններն ընդհանրապես բաշխման համակարգի վրա մեծ ուշադրություն չեն դարձնում և իրենց ապրանքը հիմնականում վաճառում են գործարանի տարածքից, իսկ այնուհետև՝ թե շուկայում ինչ գին է ձևավորվում, ում կողմից և ինչպես, նրանց համար հետաքրքրություն չի ներկայացնում (ամեն դեպքում, ըստ ընկերությունների պարզաբանումների):

Խնդիրներ կան նաև շաքարավազի շուկայում: Այստեղ շուկայի ծավալի առավել քան 90 տոկոսը ներկրվում է մեկ ընկերության կողմից՝ «Սալեքս Գրուփ» ՍՊԸ, իսկ տեղական արտադրությունը շատ փոքր ծավալ է կազմում: Նշված խոշոր ներկրող ընկերությունը շաքարավազն իրացնում է ինչպես իր սեփական պահեստից, այնպես էլ իր սեփական խանութներում: «Շաքարավազ» ապրանքային շուկայում ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, շաքարավազի 1 կգ-ի թացթողման գինը կազմել է մանրածախ վաճառքի դեպքում՝ 240 դրամ, մեծածախի դեպքում՝ 215 դրամ, ըստ Հանձնաժողովի կողմից իրականացված մանիտորինգի տվյալների, առևտրի կետերում շաքարավազի իրացման գինը կազմել է 270-370 դրամ 1 կգ-ի համար: Բնականաբար, պահեստից իրացվող (որը համարվում է մեծածախ վաճառք) շաքարավազի գներն ավելի ցածր են, քան իր խանութներում վաճառվող (որը համարվում է մանրածախ վաճառք) շաքարավազի գները: Սակայն, խանութներում շաքարավազի գները, ինչպես և վերը նկարագրված ապրանքային շուկաներում, բավականին բարձր են:

Հանձնաժողովն ուսումնասիրությունների ընթացքում գների զգալի աճ է արձանագրել կարագի և բուսական յուղի շուկաներում 2007 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Կարագը և բուսական յուղը ներկրվող ապրանքներ են Հայաստանի համար: Այստեղ, չնայած նրան, որ արտասահմանյան երկրներում տվյալ ապրանքատեսակների գները բարձրացել էին, Հայաստանում դրանց աճն ավելի մեծ էր: Փաստացի ներկրված ապրանքների ներկրման գները մնացել էին գրեթե անփոփոխ, կամ բարձրացումը զգալի չէր, իսկ վերջնական սպառողին կարագը և բուսական յուղը հասնում էր նույնիսկ մի քանի անգամ ավելի բարձր գներով: Գինը բարձրացրել էին ինչպես ներկրող ընկերությունները, այնպես էլ միջնորդները և մանրածախ վաճառքի կետերը (խանութները): Ըստ Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների, խնդիրն ավելի էր բարդանում բաշխման օդակում ձեռքբերման կամ վաճառքի համապատասխան փաստաթղթային ձևակերպումների բացակայության պատճառով, քանի որ հնարավոր չէր լինում արձանագրել, թե բաշխման որ օդակում գնի ինչ չափի բարձրացում է եղել:

Հանձնաժողովի ուսումնասիրությունների շարքում տեղ է գտել նաև հացի գների բարձրացումը: Այն դեպքում, երբ թե ներկրվող, թե արտադրվող ցորենի և ալյուրի, ինչպես նաև խմորիչի, գները զգալի աճ չեն ունեցել, հաց արտադրող ընկերությունները բարձրացրել են հացի գները: Քանի որ հաց արտադրող ընկերությունները բազմաթիվ են, ապա դրանց գնային քաղաքականությանը հետևելը և վերահսկելը օրենսդրական տեսանկյունից բարդություններ է առաջացրել Հանձնաժողովի համար:

Սաամթերքի շուկայում բաշխման համակարգի ուսումնասիրության արդյունքների համաձայն, շուկայում գերիշխող (գրավում է շուկայի իրացման 40%-ից ավելին) «Գեղարդ

մասնթերքի կոմբինատ» ՍՊԸ-ի բաշխման ցանցը բավականին զարգացած է: Ընկերությունն արտադրում է մասնթերքի լայն տեսականի: Այն ունի սեփական, այսպես կոչված, «խանութներ անիվների վրա», որտեղ վաճառվում է ընկերության արտադրանքի ողջ տեսականին և որոնք տեղակայված են ամենուրեք ու աշխարհագրական տեսանկյունից մատչելի են գնորդին: Բացի դրանից, ընկերությունն ունի իր սեփական մեքենաները, որոնց միջոցով ապրանքը մատակարարվում է առևտրի կետերին: Ընկերության արտադրանքի գների այնպիսի զգալի աճ, ինչպիսին նկարագրված է վերևում, չի նկատվել, սակայն նկատվել են տարբերակված գներ՝ նույն արտադրանքը տարբեր գնորդներին տարբեր գներով է իրացվել: Հանձնաժողովը, հիմք ընդունելով վերջերս օրենսդրությամբ ստուգման լիզորություն ստանալը¹⁷, աշխատանքներ է իրականացնում վերը նշված տարբերակված գների պատճառները և հիմնավորումները բացահայտելու ուղղությամբ: Մասնթերքի շուկայում գործող մյուս խոշոր ընկերությունները ևս արտադրողներ են: Նրանք ևս ունեն բաշխման սեփական ցանցեր և իրենց արտադրանքն իրենց մեքենաներով մատակարարում են առևտրի կետերին: Հարկ է նշել, որ տարբեր աշխարհագրական կետերում գտնվող առևտրի կետերում առկա է գրեթե բոլոր արտադրող ընկերությունների մասնթերքի տեսականին:

Բենզինը և դիզելային վառելիքն ամբողջությամբ ներկրվում է հանրապետություն: Բենզինի ներկրման 80 տոկոսից ավելին բաժին է ընկնում երկու խոշոր ընկերությունների՝ «Ֆլեշ» ՍՊԸ և «Բաղ Պետրոլ Սերվիս» Ա/Կ, որոնք էլ Հանձնաժողովի որոշմամբ համարվել են գերիշխող դիրք ունեցող ընկերություններ: Բենզինի շուկայում գերիշխող «Ֆլեշ» ՍՊԸ-ն առաջատարն է նաև դիզելային վառելիքի շուկայում: Նա ապահովում է ներկրման մոտ 40 տոկոսը: Նշված ընկերություններն ունեն իրենց սեփական բաշխման ցանցերը՝ լիցքավորման կայաններ, որոնց միջոցով իրականացնում են վառելիքի մանրածախ վաճառք: Բացի այդ, վառելիքն իրացնում են նաև իրենց սեփական պահեստներից այլ լցակայանների և խոշոր սպառողների: Դիտարկումները ցույց են տալիս, որ խոշոր ներկրողները մեծացնում են մանրածախ կետերը, որոնք վերցնում են իրենց վերահսկողության ներքո, ինչը ռիսկային է հորիզոնական համաձայնության տեսանկյունից:

Ծառայությունների շուկայի բաշխման համակարգը տարբերվում է ապրանքային շուկաների բաշխման համակարգերից, հատկապես հեռահաղորդակցության ոլորտում: Այստեղ բաշխման համակարգի ձևավորման հիմքում դրված է 2004 թվականի նոյեմբերի 3-ին «Արմենթել ՀՉ» ՓԲԸ-ին պետության կողմից տրված բացառիկ իրավունքը հանրային ֆիքսած հեռախոսացանցի, բջջային կապի ծառայությունների, ինտերնետ ծառայությունների հասանելիությունն ապահովելու և դրանցից բխող մի շարք այլ ծառայությունների համար: Հարկ է նշել, որ բջջային կապի ծառայությունների մասով բացառիկության իրավունքը վերացավ 2005 թվականի հուլիսի 1-ից երկրորդ բջջային օպերատորի մուտքից հետո: Իսկ այնուհետև, «Արմենթել ՀՉ» ՓԲԸ-ն (բաժնետոմսերը ռուսական ընկերության կողմից ձեռքբերելուց հետո) հրաժարվեց իրեն բացառիկ իրավունքի հիմքով տրված մյուս ծառայություններից:

Ուշադրության արժանի առարկա է հանդիսանում ինտերնետ ծառայությունների ոլորտում բաշխման համակարգը:

«Արմենթել ՀՉ» ՓԲԸ-ին, ինչպես արդեն նշվեց, բացառիկության հիմքով տրված էր ՀՀ-ում ինտերնետ ծառայությունների հասանելիությունն ապահովելու իրավունքը: Ընկերությունը ստանում էր, այսպես կոչված, ինտերնետը արտասահմանյան ընկերություններից և տրամադրում այն 10 միջնորդ ընկերությունների՝ խոշոր պրովայդերներին (մատակարարներին): Նշված 10 պրովայդերներն իրենց հերթին երեք եղանակներով (առանձնացված գծով, առանց լարի՝ ռադիոմղեմի միջոցով և Dial-Up)

¹⁷ Օրենք, Գլուխ 6, հոդված 19. «Հանձնաժողովն իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրավունք ունի [...] գ) տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավաստության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով օրենքով սահմանված կարգով իրականացնելու հետազոտություն, ստուգում, ուսումնասիրություն և (կամ) դիտանցում...»:

ինտերնետը մատուցում էին վերջնական սպառողին կամ, նաև, միջնորդ պրովայդերներին, այսինքն երկրորդ մակարդակի պրովայդերներին, որոնք էլ իրենց հերթին ծառայությունը մատուցում էին վերջնական սպառողին՝ օգտվողին: Ընդ որում, նախկինում «ԱրմենԹել ՀՉ» ՓԲԸ-ն ինքը վերջնական սպառողին ինտերնետ ծառայություններ չէր մատուցում: Իսկ այժմ մատուցում է, Dial-Up եղանակով, օգտագործելով իր հանրային հեռախոսային ցանցի համակարգը:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարագավորող հանձնաժողովը փոփոխություններ մտցրեց տվյալ ոլորտի լիցենզավորման համակարգում, որի արդյունքում նախկին 10 խոշոր պրովայդերների փոխարեն շուկայի մասնակիցներ դարձան այն ընկերությունները, որոնք ստացել են համապատասխան լիցենզիա, իսկ նախկին խոշոր և միջնորդ պրովայդերների մի մասը (որոնք չունեն համապատասխան լիցենզիա) լիցենզավորված ընկերությունների հետ պայմանագրային հիմունքներով մատուցում են նշված ծառայությունները:

Հանձնաժողովի իրականացրած վարույթներն ուսումնասիրելիս պարզվեց, որ 2007 թվականի աշնանը Հանձնաժողովը քննարկել էր մի գործ, որն առնչվում էր ավտոմեքենաների ոլորտում դիստրիբյուտորական ցանցին:

«Ի Էմ Սի» ՓԲԸ-ն դիմել էր ՏՄՊՊՀ նշելով, որ հանդիսանալով «ԿԻԱ Մոթորս» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում՝ ներմուծում է «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենաներ գործարանային գներով, այն դեպքում, երբ մեկ այլ ընկերություն՝ «Վալենսիա» ՍՊԸ-ն, Միացյալ Արաբական Էմիրություններից ներկրել է 2006 թվականին արտադրված «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենաներ ոչ շուկայական գներով, որոնք մաքսային ձևակերպում են ստացել որպես 2007 թվականի արտադրության ավտոմեքենաներ: «Ի Էմ Սի» ընկերությունը հայտնել է իր մտավախությունն առ այն, որ «Վալենսիա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ներմուծված ավտոմեքենաները կարող են վաճառվել իբրև նոր ավտոմեքենաներ ոչ շուկայական արժեքներով, որի հետևանքով կընկնի «ԿԻԱ» մակնիշի վարկանիշը և կստեղծի խոչընդոտ իրենց ընկերության ստանձնած պարտավորությունների կատարման համար և կխաթարվի մրցակցությունը:

Այս գործն ուսումնասիրելու ընթացքում Հանձնաժողովի առաջ ի հայտ էին եկել խնդիրներ: Մասնավորապես, եթե «Ի Էմ Սի» ՓԲԸ-ն հանդիսանում է «ԿԻԱ Մոթորս» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում, ապա որևէ այլ ընկերություն իրավունք ունի՞ Հայաստան ներկրել «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենաներ, թե՞ ոչ: Կամ, եթե որևէ այլ ընկերություն իրավունք ունի Հայաստան ներկրել «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենաներ, ապա ի՞նչ պայմաններով, գներով և ո՞ր երկրներից: Տվյալ խնդրին անդրադարձ կա նաև սույն հաշվետվության 2.3 կետում:

5.4 Բաշխման համակարգի ազդեցությունը մրցակցության պաշտպանության Օրենքի կիրարկման գործընթացի վրա

Սույն ուսումնասիրության նպատակների համար տվյալ ազդեցությունը դիտարկվել է մեթոդաբանական խնդիրների տեսանկյունից:

5.4.1. «Համապատասխան» շուկայի հատկորոշում՝ մեծածախ և/կամ մանրածախ շուկաներ

Ինչպես նշվել է վերևում, Հանձնաժողովի վերջին շրջանի հրապարակային փաստաթղթերից պարզ է դառնում, որ հանրապետության ապրանքային շուկաներում բաշխման համակարգի անկատարության հետևանքով որոշակի բարդություններ են առաջացել «համապատասխան» շուկաների հատկորոշման գործընթացում, հատկապես, մեծածախ և մանրածախ շուկաների հատկորոշման ու ճանաչման մասով: Հաճախ բաշխման համակարգում մանրածախ և մեծածախ իրացումները, և հետևաբար՝ շուկաները, հնարավոր չի եղել տարբերակել մի շարք պատճառներից ելնելով: Հարկ է նշել, որ նման

խնդիրներ հիմնականում առաջացել են այն դեպքերում, երբ Հանձնաժողովը կատարել է շուկաների «կառուցվածքային» ուսումնասիրություններ:

Նախ և առաջ, ուսումնասիրված շուկաներում բավարար զարգացած չեն, բացակայում են կամ պարզապես թափանցիկ չեն բաշխման համակարգերը¹⁸, ինչի հետևանքով Հանձնաժողովում մշտապես առաջանում են կասկածներ դիտարկվող շուկաներում իրացման ծավալները բնութագրող ցուցանիշների արժանահավատության վերաբերյալ:

Հանձնաժողովի կողմից հրապարակված և ներկայումս գործող երկրորդային օրենսդրությունը նույնպես չի պարունակում տվյալ խնդրի կանոնակարգմանը նպաստող հատուկ դրույթներ:

Նշված խնդիրը բարդանում է նաև խնդրո առարկայի առումով ՀՀ օրենսդրության ոչ հստակ լինելու հետևանքով: Մանրաձախ և մեծաձախ իրացման վերաբերյալ դրույթներ կան միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում¹⁹:

5.4.2. Շուկաների մասնակիցների հատկորոշման խնդիրները

Հաջորդ ի հայտ եկած խնդիրը, որի մասին հիշատակվել է վերևում, կապված է շուկայի մասնակիցներին պարզելու հետ: Կան խոշոր արտադրող ընկերություններ, որոնց արտադրանքը ծածկում է ամբողջ շուկան, սակայն նրանք շուկայի վրա իրական ազդեցություն չունեն: Խնդիրը պատկերավոր նկարագրելու համար բերվում է «Կերակրի աղ» ապրանքային շուկայի օրինակը:

«Աղ»-ի շուկայում իրացվող աղի 95%-ից ավելին «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի արտադրանքն է: Սակայն, տվյալ ընկերությունը զբաղվում է միայն արտադրական գործընթացի կազմակերպմամբ: Կա մեկ այլ անձ, որի կազմակերպա-իրավական կարգավիճակը հստակ չէ, որն ստանձնել է, կամ որին «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ն տրամադրել է արտադրված աղի բացառիկ ներկայացուցչի կարգավիճակը: Արտադրողը չի զբաղվում իր արտադրանքի իրացմամբ: Երբ սպառողները դիմում են կոմբինատին աղի որոշակի խմբաքանակ ձեռք բերելու նպատակով, ձեռնարկության ներկայացուցիչներն առաջարկում են դիմել բացառիկ ներկայացուցչին: Տվյալ իրավիճակում բնական խնդիր է առաջանում, թե ում դիտարկել որպես շուկայի մասնակից՝ արտադրող «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի¹⁸, թե՞ նրա բացառիկ ներկայացուցչին: Փաստորեն, ֆորմալ առումով, շուկայում իրացվող ամբողջ աղի ծավալները, զները, իրացման պայմանները և դրան առնչվող մյուս հարցերը «որոշում» է բացառիկ ներկայացուցիչը, այսինքն, շուկայի դերակատարը նա է և ոչ թե արտադրողը:

5.5. Բաշխման համակարգի անկատարությանը նպաստող հանգամանքները

Ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է դիտվում նաև նկարագրել և դիտարկել այն հանգամանքները, որոնք նպաստել են ապրանքային շրջանառության ոլորտներում բաշխման համակարգում տիրող վերոհիշյալ իրավիճակի ձևավորմանն ու արմատավորմանը:

¹⁸ Խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել սույն բաժնի 1.1. հատվածում:

¹⁹ Խնդրին առնչվող ՀՀ գործող օրենսդրության նկարագրությունը բերված է սույն հաշվետվության 1-ն գլխում:

5.5.1. Հարկային օրենսդրություն և քաղաքականություն: Օրենսդրական բնույթի այլ խնդիրներ

Բաշխման համակարգի ձևավորման և զարգացման համար որոշակի առումով խոչընդոտ է հանդիսանում կիրառվող հարկային քաղաքականությունը: Ստորև բերվող օրինակները որոշակիորեն կարող են հաստատել արված պնդումը:

